

ժմղովրդի համար: «Այդ բոլորի փոխարէն — պնդում էր նա: — պէտք է ընդունել գործունէութեան մի այլ սիստէմ, այն է՝ ան և ատական ու է ու օր, ուղղած կառավարութեան կեղեցիչ պաշտօնեաների ու ամէն մի ձնշղի դէմ: Թող տէորիստի պարտքը լինի վերջ դնել բանաւորների կեանքին եւ սպանութիւնը կատարելուց յնտոյ երբեք փախուստ չտալ, այլ կանգնել տեղնուտեղը եւ յայտարարել, որ ինքն է կատարողը, առանց ուրիշների մասնակցութեան եւ դրդման, որպէսզի իր պատճառով չմնասեն ուրիշները, շատ անգամ ամրող դիւղեր ու համայնքներոց: Գուցէ շատերին անզործական թւի այդ, ան և ատական ծրագիրը, բայց անհերքելի է, որ դա նրա անձնական քաջութեան եւ սասկետական վեհ բնաւորութեան պերճախօս նշանն է: Արամեանի այդ առաջարկը ընդունելութիւնը չդատաւ: Ընդհանուր ժողովով, եւ այդ իսկ պատճառով նա, անխախտ համոզած իր մտքին, հետացաւ կազմակերպութիւնից եւ մինչեւ 1894 դուրս մնաց յեղափոխական գործոն աշխատանքներից, զբաղւելով գլխաւորապէս ընդհանուր պրօպագանդայով:

Բայց ահա վրայ հասաւ 1894 թւակսնը, հայկական չարժման ընթացքում, այդ նշանաւոր տարին, եւ մի չարք դէպքերի ու երեւոյթների աղդեցութեան տակ՝ նա, այդ սարւայ աշնանը, վճռեց նորից երկիր մոնել:

Նրա ուշագրութեան զլիսաւոր կէտը այժմ — ժողովրդի ինքնապաշտպանութեան պահանջին բաւարարութիւն տալն էր: Միանգամայն արտակարգ եռանդով կամաւորներից կուող ֆէղայական խմբեր էր կազմում նա զանազան վայրերում, իրար հետ սերտ փոխադարձ յարակերութեան մէջ գնում, զէնքեր փոխադրում եւ բաժանում... Եւ այս բոլորը երկու կենսական նպատակների համար, մէկ որ անզուսպ թշնամիները, օգտականութիւն հայ ժողովրդի անզէն լինելուց, անակնկալ յարձակումներով աղէտների պատճառ չկարողանան դառնալ, եւ երկրորդ՝ որպէսավ իր և իր ընկերների կազմած, փայփայած մէ ծծը առ իր մի օր յաջողութեամբ պսակի:

Թէ որո՞նք են Արամեանի արդինաւոր գործունէութեան պատուղները՝ մի մի յիշասակելը անյարմար ենք դատում: Դա ապագայի գործ է Այսքանը միայն կ'ասենք, որ Արամեանի նման գործիների կորուստը լոկ անհասի կորուստ չէ, այլ կարծես, կուող բանակի մի ամրող մասի մահացում, — այնքան բարձր էր նա նոյնիսկ յեղափոխական դրօշը ամուր բանած ընկերների շարքում իր բարոյական բացառիկ բնադր-

ներով, համոզմունքի ու գաղափարի տոկոնութեամբ, իր առաջնակարգ ընդունակութիւններով... Զերբակալւերով 1896 թւի յուլիս թիւն, Արամեանը մինչեւ կախազան բարձրանալը, ամրող երեք տարի, փակւած մնաց Կարինի բանտում, ենթակայ ամէն տեսակ առաջանքների, բայց երբեք նա չմոռացաւ իր միակ առնչանքը — մեռնել փայլուն ճակատամարտի մէջ զէնքը ձեռվն, զինակից ընկերների կողքին... Թէ որքան մէծ էր նրա հաւատոր եւ որքան համուած մողակիսական էր Արամեանը, այդ պայծառ կերպով երեւում է իր մի նամակից, որ զիւլ է 1896 յուլիս 30-ին Կարինի բանտից — մի նամակ այնքան յուղիչ եւ այնքան պերճախօս, որ մենք կը տպագրինք „Դրօչակութիւնի յաջորդ համարում, իրեւ նրա իշեալ ների արտայայտութիւն:

Այդ իդէալների համար էր, որ նա սիրով կախաղան բարձրացաւ...

Կարինի մուալի բանտը կալանաւորներ շատ է առնել. այդ բանալից հազարաւոր մարդիկ են տարւել դէպի կախաղան, բայց այնպիսի հերոսներ, ինչպէս Արամեանը — երբեք: Երբեք տարւայ տաժանիկի բանտարկութիւնը, անիմնայ ծեծը, որ յաճախ դործ էր զրուում նրա վրայ, կախաղանի հեռանկարը, որ մի քանի անգամ յաջորդեց 101 տարւայ բանտարկութեան վճռին, նախկին ընկերոջ ստոր մատնութիւնը *), անվերջանալի եւ բազմատեսակ սպառնալիքները — այդ բոլորը մի բոսէ, մի վայրկեան անգամ չթուլացրին նրա հերոսական կրծքում հայրենիքի ազատութեան հաւատը, եւ նաև այդ կենդանարար հաւատով հաստատ քայլերով բարձրացաւ կախաղան ու աչքերը-դարձրած սարսափանար ամբոխին գոչեց: «Կեցցէ յեղափոխութիւն, կեցցէ յեղափոխութիւն»...

Սարուկ, գմբախաւ ժողովուրդ, որ չկարողացաւ արձագանգ տալ նահատակի հոգուց բիսած այդ գոչին... Բայց թող չըրգովլի՛ հանգիստոց, թամկազին ընկերութամբ չի անցնիլ եւ ստրուկի ազատ որդին, հպարտութեամբ կանգ առնելով նոյն վայրում, ուր կանգնած էր քո սեւ կախաղանը, լիսաբերան կը զոչի.

«Փա՛ռք յեղափոխութեան, Փա՛ռք նահատակի յիշատակին!... »

» Մի զարցելի զաւածան, լինուցի ձիքարան գէղոգեան, ծանօթ Ազգայիլ կեղծանունով, որ իրենմ Կարինի յեղափոխական գործի մէջ էր եւ շատ մօտիկ Արամեանը, իսկ վերջը լարձաւ լրտես, մուս ոստիկանական ծառապութեան մէջ եւ յաճախ ներկայ լինելով Արամի հարցաքննութիւններին, ուղղութիւն էր տալիս ընսերի արթերին:

ՆՇԱՀԱԿՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐՈՒ ԿԵՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԻԹԻ ՄԱՍԻՆ

Պր. Պիէռ Քիյառ, բանաստեղծ և հրապարակագիր, — որուն մեզ ուղած մէկ նամակը կը դնենք ստորև, — անծանօթ մը չէ մեր հասարակութեան: Երկար ատեն Պօլիս ապրած, մօտէն ծանօթ թիւրքը կեանքին, սիրած հայ ցեղը իր բոլոր առաւելութեաններովն ու թերութիւններովը, հայկական խնդրին ամէնէն ամէհի ամուսինութեան մէջ: Հզօր գրիչ մը, անկաշկանդ միտք մը, բարձր հոգի մը — ահա բնորոշ գծերը այն մարտիկին, որ երեք տարիէ իմեր անդուլ կը յուզէ Փրանսայի հանրայի ի նոր առ ի նոր ի բ ը ա ր ծ ի բ ը ա ր մատական մամուլին մէջ: Գեռ վերջերս ալ ինչպէս գիտեն մեր ընժերցողները, Այօրօ-ին Մեծ ՄԱՐԴԱԿԱՆԱՎԱՆ խորագրով բաժնին տակ, օրւան խնդիրներուն կարգն անցուց մեր դատը:

Paris, le 24/6 octobre 1899.

Camarades,

La Bête Rouge Abdul-Hamid fait peser sur toutes les races de son empire une abominable oppression, mais sa férocité s'exerce d'une façon toute particulière sur les Arméniens.

Պարիզ, 24/6 հոկտեմբեր 1899

Հնկերներ,

Աբդուլ Համիդ Կարմիր Գաղանը իր կայսրութեան բոլոր ցեղերը կը ճնշէ գարցելի կեղծերում մը տակ: Բայց իր վայրագութիւնը մասնաւոր կերպով գործ կը դնէ հայերուն գըայ:

Malgré les massacres, l'emprisonnement, la transportation en masse, la famine organisée, les persécutions sans nombre, vous êtes décidés à ne pas cesser la lutte contre celui qui ne laisse à ses sujets d'autre recours que la révolution.

Les gouvernements des peuples dits civilisés se sont fait les complices et les valets de votre bourreau qui les paye en concessions financières et en décorations. Mais dans tous ces pays vous avez l'appui des hommes de cœur et des révolutionnaires qui refusent de s'associer aux hontes officielles des gouvernements, leurs maîtres et leurs ennemis.

De toutes nos forces nous continuerons, avec vous et pour vous, le combat contre le grand assassin par la parole et par la plume et, le moment venu, par l'action.

J'ai été des vôtres depuis le jour où les hasards d'un long séjour en Orient m'ont fait assister au martyre de votre peuple.

Soyez sûrs, camarades, que je ne faillirai pas dans l'avvenir à mon devoir de solidarité humaine et révolutionnaire.

Pierre QUILLARD.

Զարդերուն, Խմբովին բանտարկութեան և տարագրութիւնները, կազմակերպւած սովորն, անթիւ հալածանքներուն հակառակ, դուք վճռեր էք չդադրեցնէք կոհեր այն մարդուն դէմ, որ յեղափոխութենէն դուրս ուրիշ ապաւէն մը իրողի իր հանդերձներուն:

Քաղաքակիրթ կոչւած ժողովուրդներու կառավարութիւնները ձեր գահին մեղսակիցն ու ծառաները եղան, իր վարձ ստանալով ելմատական արտօնութիւններ ու շքանշանները Բայց բոլոր այդ երկիրներուն մէջ ձեր թեութիւններն են սրտի մարդիկ և յեղափոխականներ, որոնք կը մերժեն մասնակցիլ իրենց տէր ու թշնամի վարիչներու պաշտօնական խաղը-խայտառակ գործերուն:

Մեր բոլոր ուժով մենք պիտի շարունակենք, ձեզ հետ և ձեզ համար, Սեծ Մարդասպաննին դէմ կոհեր խօսքով ու գրիչով, և երբ ժամը գայ, գործով:

Ես ձերիններէն եղայ այն օրէն՝ երբ Արևելքի մէջ երկար բնակութեան մը պատահմունքը հանդիսատես ըրաւ ինձի ձեր ժողովուրդին նահատակութեանը:

Վստահ եղէք, ընկերներ, որ ապագային ալ պիտի չժերանամ մարդկային և յեղափոխական համերաշխութեան իմ պարտքիւս:

ՊԻԵՌ ՔԻՑԱՌ

ԱՐԲՈՒՐՅԵՅԻՆ ՏՐԱՄԵՐԱՆՈՒԹԻՒՆ

“Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկան վարչութիւնը այսպիս ծզսամանում (1876, սեպտեմբեր) կարու է նորապայի համայնութեամբ կամ նրա վասերացմանը շարունակել ին օրինական գոյութիւնը հուլիսի այդ դէպարտմէնտում պէտք է յանց անը համար եւ մարդկային արքարանատութեան ամէն մի բոլոր իշխանութիւնը իշարը գործ զնելու դէմ, ամէն մի ընդունութիւն ամէնազարելի բնապետութեան դէմ: — Բայց մենք դեռ չենք հասել այդ տեսակ ծարայեղ սուրբացման”...

Ա. ԳԼՈՒԽՈՅ

III

Մենք արդէն ցոյց տւինք հայկական աղետների հիմա նա կան պատճառն երը և այսպէս անսանող առ իթ կամ պատճառ կն երի գերը այդ աղետներում: ծխտելով միանգամայն, թէ հայ յեղափոխական շաբուռը մեր անհամար կորուսների հիմնական պատճառներում: ունէ տեղ է բռնում, մենք ցոյց տւինք նաև, որ այդ շաբուռը նոյնիսկ առիթ կամ պատրւակ կարող է համարւել միմիայն սահմանափակ, պայմանական մտքով — նոյնչափ, որչափ առհասարակ հայ ժողովի ազատութեան ինդրի հետ կապ ունեցող ամէն մի զովքի շատ ցանկալի, թէկուզ բոլորից զատագովող երկոյթ:

Այդպիսով կամայ ակամայ մեղ համար պարզում է, որ այն բոլոր գանգատները, որոնք այսօր ծանրաւում են յեղափոխական շաբուռ կամ ձեռնարկների վրայ, իբր կոտորածների պատճառ կամ առիթների

վրայ, — իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիձաղանձ ձիչեր, որոնք անխուսափելի են դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը և կամ գաղափար չունեն գրա զարգացման համար անհրաժեշտ պայմանների մասին: Հազար ու մի տեսակ ձեռնպահութիւններ, պայմանական համաձայնութիւններ, “թէւ” ու հրայց “երի հետ համեմած համակրութիւններ կամ հակակրութիւններ — զբանք համակրութիւններ կամ հակակրութիւնները ուրեմն խեղճուկ մտքի արտայատութիւններ են, որոնց տակ թագնւում է կամ փափուկ կեանքի սիրահար հակա այս կամ զա փոխան ի մաս ստակ ի աղքատիկ հոգին: գէմքը կամ եսամոլ ի մաս ստակ ի աղքատիկ հոգին: Հարցերը ուրեմն այդպէս էլ գնենք — այսինքն նայենք:

1. Որքան անխուսափելի, որքան բնական և միաժամանակ որքան ցանկալի էր հայ յեղափոխական շաբուռը, և

2. Որքան նպատակայարմար էր նրա գործնական ընթացքը կամ ուրիշ խօսքով՝ նրա ընդունած տակտիկան անմիջական կուռւմ:

Սկսենք առաջին կէտից:

Տաճկական կեանքի խպատ անբարոյական, անսահման տգէտ և մոլեռանդ մթնոլորտը, կապւած այն ընդհանուր ատելութեան և մշտական վտանգի զգացմունքների հետ, որոնք միշտ դեր են խաղացել տիրող տաճկինների և հպատակ քրիստոնեաների: յարաբերութիւններում, վաղուց դրել էր Թիւլքիայի քրիստոնեայ ժողովուրդ ներին: այնպիսի հակակուլուրական պայմանների մէջ, ուր

ամէնսավայրենի հալածանքներ, անօրինակ հարստահարութիւններ, ստրկական իրաւազգութիւն, կատարեալ անպահովութիւն, աղքատութիւն, պանդխութիւն և այլն դարձել էին մշտական երևոյթներ Նրանց կեանքում: Եւրոպական պետութիւնների աչքածակութիւնը դեպի քայլքաւող Թիւրքիան լուսնում էր երկրի խառնակ, անապահով, տագնապալից ներքին կեանքը, — եւ ահա տաճկահպատակ քրիստոնեաների համար ստեղծւել էր իրերի մի դրութիւն, որի ճնշման տակ նրանք օրից օր, ժամից ժամ բարոյապէս աւելի և աւելի պիտի ընկնէին, անտեսապէս թշւառութեան հասնէին, մտաւորապէս յետադիմէին, քաղաքականապէս ջնջման սիստեմի մշտական առարկայ լինէին:

Այդ էր պատճառը, որ տաճկական բռնութեան տակ հեծող Յունաստանը յուղում էր դեռ անցեալ դարից սկսած. այդ էր պատճառը, որ Կրէտէ, Լիբանան, Սերբիա, Չեռնոգորիա, Ռումանիա, Բունիա, Հերցոգօվինա, Բուլգարիա, Կռւելով, ոմանք հարիւր տարուց աւել ումանք պակաս, իրենց մեծաքանակ զոհերի գնով միանդամայն ապացուցեցին, թէ որքան անտանելի էր տաճկական լուծը յիսաղաղ՝ կեանքով ապրելու համար: Նոյն պատճառն էր, որ դեռ 1774 թւին, ուռսաց կայսրութիւն Եկատերինա II-ի օրով Քիւչիւք-Քայնարջիի դաշնագիրը դրեց տաճկահպատակ սլաւոններին ուռսաց կառավարութեան պաշտպանութեան տակ: Նոյն այդ պատճառովն էր, որ դեռ 1815 թւին ուռս կառավարութեան մի ծանոցագիրը եւրոպական պետութիւններին, առաջարկում էր Եւրոպ պայ Ճի ընդհանուր հովանաւորութեան տակ վերցնել տաճկահպատակ քրիստոնեաներին: Նոյն այդ պատճառովն էր, որ Անգլիա, Ֆրանսիա, Աւստրիա և Պրուսիա 1854 ապրիլ 9/21-ին հաւաքական արձանագրութեամբ պահանջում էին յունական հաճախական քրիստոնեաների քաղաքական և կրօնական իրաւունքների ապահովութեամբ պահանջում էին յունական պատճառութեան տակ: Պարիսի դաշնագրում 9-րդ յօդածը դարձաւ, իսկ 1860 թւի օգոստոս 3-ին իրաւունք տւեց Աւստրիային, Պրուսիային և Ռուսաստանին, կրկին առանձին արձանագրութեամբ, պարտաւորել Տաճկաստանը յընդունել լուրջ վարչական միջներ օսմանեան կայսրութեան ամեն դաւանութեան քրիստոնեաների կայութիւնը բարելաւելու համար: Եւ այդպէս շարունակ մինչեւ աւստրիական մինիստր կուս Բէյստի առաջարկութիւնը 1867 թւին — բոլոր տաճկահպատակ քրիստոնեաներին տալ սահմանագրութիւն — և վերջապէս մինչեւ Բերլինի դաշնագիրը:

Նիւթի հանրածանօթութիւնը և յորոշակի ծաւալը մեզ ստիպում են չծանրանալ յատկապէս հայ ժողովորի նախարարական յերջանիկ դրութեան նկարագրի վրայ:

Հարիւր հազարաւոր գաղթականութիւններ սկսած անցեալ դարից. բռնի գաղթականութիւն ուռսաց սահմա-

նակից նահանգներից դեպի Տաճկաստանի նորքերը (Սերգէյ Գլինկա — „Հայերի զաղթականութիւնները“): Հարիւրաւոր գիւղերի ու վանքերի հողերի յափշտակութիւն (1872 և 1876 թւի պատրիարքական տեղեկագրեր). Հարիւրաւոր ուրիշ գիւղերի կատարեալ աւերումը (Կապոյտ գիրք, 1880 թ.): մասնակի կոտորածներ և հայերի ջնջման բացայայտ ծրագիր (Բայազէդ 1877 թ., Զէյթուն ու Քեամիլ փաշա 1879 թ. և այլն). բազմաթիւ գաւառների բռնի կրօնափոխութիւն դեպի մահմէդականութիւն (մանաւանդ Կարինի և Տրապիզոնի նահանգներում): կամաւոր կրօնափոխութիւն դեպի կաթոլիկութիւն և բողոքականութիւն. նիւթական նպաստներ կամ օտար պետութիւնների հովանաւորութիւն ձեռք բերելու ակնկալութեամբ (ամբողջ թիւրքաց Հայաստանը). պարբերական սով տասնեակ հազարաւոր զոհերով (1880 թ.): Հարիւր հազարաւոր չերքեզների, տաճիկների, լազերի, քրդերի, և թարաքամանների հայաստան և Փաքր Ասիա տեղափոխելը — ահա նախայեղափոխական յերջանիկ դրութեան մեծաքանակ յրարիքները, ահա այդ դժոխային դրութեան սոսկալի արտայայտութիւնները: Եւ այս բոլորի հետ ընթանում էր հայ ժողովորի առօրեայ կեանքը — մշտական երկիւղի, անպատութեան և անկերջ զրկանքների այդ հրէշային զանգւածը:

Բայց տեղ տանք օտար հեղինակների մի քանի ընդհանուր դիտողութիւններին էլ:

«Դեռ 1855 թւին, ասում է Բրայս, գէնէրալ Արք Փ. Վիլիմ զրում էր, ող հայկական նահանգները ամէն տեսակէտից տառապատմ են սիստէմական անարգ հարասահարութիւնների տակ, եւ բնորոշում էր թիւրքակավարութիւնը իրբեւ բռնակալութեան մի այն պիսի մեքենայ, որ իր նմանը չունի ամբողջ աշխարհում»:

Իրլանդացի գօկտօր Ռայտ, Սիւրիայում երիցական առաքելութեան մեծաւորը 1877 թւին իր հրատարակած մի գրքում իմիջի այլոց ասում է.

«Տաճիկները աւելիած են առաջացնում ոչ միայն վայրագ կատաղութեան մէջ, այլեւ կատարեալ սառնարտութեամբ եւ միանգամայն համաձայն իրենց իրաւագիտութեան, օրէնսդրութեան եւ հաւատին. . . թիւրք կայսրութեան մէջ հազիւ թէ գտնւի մի գիւղ, որ յուննենայ իր զարհուրնի յիշողութիւնները, — այնքան սոսկալի յիշողութիւններ, որ անկարսլի է մոտածել կամ խօսել նրանց մասին»:

Կոտորածները, գրում է Դիլօն, «Երկնքի ողորմութիւն են», համեմատած հայերի «ամէն օր եալ դժոխային դրութեան հետ»:

«Երդմամբ հաւատացնում ենք ձեզ, — զլում են խընուացի հայերի 36 ներկայացուցիչները անզիլական ազգին ուղղած ինդրագրում, — որ Սասունում տեղի ունեցած կոտորածը միմիայն մի կաթիլ է հայկական այն արեան ովկի ան ուսումնական գրութեան մէջ, որ հետզհետէ եւ լուելան թափւում է ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ»:

Կրկին յիշեցնելով, որ Բոլին ժակմէնը հրատարակել

է իր գերբը հայկական կոտորածներից շատ առաջ բերում ենք նրանից հետևեալ տողերը.

«Զի կարելի երեւակայել աւելի սարսափ եւ ի դրութիւն, քան թշւառ, ստրկացած, անպատճած եւ, կնղեւքած հայ ժողովրդի զրութիւնը.. Ամէն տեղ, ամէն քայլափոխում աւելրման եւ բռնակայութեան ողին արտայալուում է հազարաւոր ձեւերով եւ եթէ յեր արեւմուսան նոյնիսկ ամէնանամբերատար ժողովուրդներից մէկին վիճակւէր ենթարկել այդ աղէտներին, թէկուզ միայն մի օրաւոյ ընթացքում, իսկոյն դուրս կը թռչէր նրա կրծքից զայրոյ թի աղաղակ».

Եւ այն և այն:

Այսպէս են խօսում նախայեղափոխական „երջանիկ“ շրջանի մասին փաստերը, այսպէս է խօսում կեանքը, այսպէս են խօսում թիւբքաց Հայաստանի կեանքին ծանօթ մարդկանցից հարիւրից իննսուն ինը:

Բայց ինչ է ասում մեզ այս բոլորը: Միակ եղբակացութիւնը, որ մենք կարող ենք անել — այդ այն է, որ հայկական կեանքը վաղուց եկել կանգ էր առել մի խոշոր դիլէմայի առաջ. — կամ անպայման ջնջում իրը մի ամբողջութիւն, իբր մի ազգութիւն, իբր մի հայրենիք տէր ժողովուրդ, կամ դիմադրութիւն՝ կեանք, պատիւ, ստացւածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի դէմ: Միջին ուղիների սիրահարները, ինչպէս վայել է իրենց, իհարկէ, այստեղ էլ գտնում էին մի երրորդ ելք: Կարծելով թէ հայ ժողովուրդը իր կուլտուրական հակումների շնորհիւ յաղթող պիտի հանդիսանայ իրեն շրջապատող տիսուր միջնորդուում, առանց զէնքի դիմելու և դրանով պիտի աւետէ արար-աշխարհին մի նոր սկզբանք, որ մարդկային պատմութիւնը իր ամբողջ տարածութեան վրայ միշտ անտես էր արել — այն է, որ կարելի է ազատութիւն ձեռք բերել լոկ ոքազաքակը թական խաղաղ պատերազմով»:

Սակայն օրէցօր աւելի, և աւելի ծանրացող դառն իր ական ութիւնը մի կողմից և միւս կողմից այդ սոսկալի դրութեան գիտակցութիւնը հայ հասարակութեան այն մասերում, որոնց սթափեցրել էր մեր մտաւ և որ շարժումը, հետզհետէ գալիս էին համոզելու հայերին, որ նրանք լաւ կ'անեն, եթէ առայժմ հրաժարւեն այդպիտի մի մեծ ծառայութիւնից յօդուտ ընդհանուր մարդկութեան, և որ ընդհանրութեանը մեծ ծառայութիւններ մատուցանելու համար հարկաւոր է նախ պաշտպանել և ապահական գովութիւնը: Եւ երբ դրութիւնը ստանում է այդպիտի սուր կերպարանք, երբ պարզում է, որ իրերի ընթացքը ինքնըստիսքեան դէպի կորուստ և տանում, բնական չէ արդեօք, որ մի ժողովուրդ այդպիտի հանդամանքներում ընտրի այն թէկը վասնագաւոր, բայց և յուսատու ուղին, որ զոհերի հետ միասին խոստանում է նաև ուեւ ապագայ: Առաջին դէպքում անխուսափելի է անպատիւ, տմարդի, ժողովուրդի անհուն ստորութիւնը ապացուցանող ան-

լուն, մի սղբազան ու ի սկ է պայմանական յաջողութեամբ: Ապահով և պատւաւոր կեանքի հզօր բնազդը — այն յաւիտենական, հրաշագործ բնազդը, որով ապրում ու գործում են ժողովուրդները, թէկ շատ ժուլացած, բայց բարեբախտաբար դեռ խպառ չէր բժացած հայ ժողովուրդի որոշ մասերում, և միակ այդ բնազդը արդէն բաւական էր՝ մահաբեր դիլէմայի դիմաց՝ ինքնապաշտպանութեան բոլոր զգացմունքները նրանց մէջ լարելու համար: Բայց մենք ունեցանք և մի ուրիշ զօրեղ նպաստաւոր հանգամանք, որ վերջապէս պիտի որոշէր, արագացնէր հայութեան ելքը այդ տատանման շրջանից: Այդպիսի մի պայման եղաւ Բերլինի դաշնագիրը իր 61-ըդ յօդւածով: Եթէ մինչև այդ յօդւածը՝ ջնջման հեռանկարից խուսափել ուղենալով, վատաշ, տկարացած և իր տիսուր անցեալի բազմաթիւ բացասական հետքերը կրող հայր կարող էր նաև վախենալու սիսկի վանդից, — այդ յօդւածով հայութիւնը իրեն արդէն դաշնակից է տեսնում նւրօպական ամբողջ վեց պետութիւնները, և յաջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի փոխարկէին: «Եթ ուսուց, ձուոյ յէ տան» — գոռում էր եւրօպան և հայերի մէջքին կանգնում: Տատանումը այլէս անկարելի էր, — և աչա ժողովզդի սրտից պայմում է յեղափոխական շարժումը իր հոսանքի մէջ ընդգրկելով ժողովութական հերոսների և գրական գործիչների մի ամբողջ շղթայու յեղափոխական յայտնի կամ անյարտ կուսակցութիւնների մի ամբողջ ցանց եւրօպայում և Մայր երկրում:

Հարցնում ենք ուրեմն, բնակա՞ն էր, ցանկա՞լ էր վերջապէս հայկական յեղափոխական շարժումը թէ ոչ Արդեօք յեղափոխական հոսանքը ինքը հարազատ և միակ յուսատու զաւակն էր իրական կեանքի, թէ նրա վթայ արւած արհեստական մի պատւաստ:

Եւ ընդհակառակը՝ եթէ կայ մի բան, որի մասին կարելի է ափսոսալ, — այդ արդեօք այն չէ, որ շատ ուշ ստեղծւեց այդ շարժումը մեր մէջ և որ դեռ մինչև այսօք էլ մենք շատ թոյլ ենք այդ միակ յուսատու ճանապարհի վճար: Գոնէ օտարները և նոյնիսկ տաճիկ կառավարութիւնը շատ բնորոշ են խօսում այդ մասին:

Մենք արդէն նախորդ յօդւածներով ցոյց տւինք, որ օտար հեղինակներից ոմանք ոհայ յեղափոխական գաղափարը՝ ուղղակի անւանում են ոսարսափելի կացութեան հետևանքը»:

Բայց լսենք էլի մի քանիսներին և ամէնից առաջ հեղինակաւոր թիւրք կառավարութեան:

1893 թւին սուլթան Արդիւլ Մէջիդի ստորագրութեամբ հրաժարակւած ոթանզիմաթը՝ հոչակում էր.

«Ոչ ոք, որքան էլ իրնէ խաղաղասէր լինի, չի կ արող չդիմել բոնի մի ջոցն երի, երբ վասնգուում են նրա կեանքն ու պատիւը»:

Հոչակաւոր կանօնիկու Մակիօլը.

«Ես խկոյն կը նկարագրեմ հայերի ջնջման այդ

դիւական ծրագրի զարգացումը խոկ այժմ թոյլ կը-
տամ ինձ անկեղծօրէն անելու, որ հայերը եթէ ուեւէ
չնշն յրց ունէին յաջողութեան վրայ, ոչ միայն
իրաւունք պիտի ունենային, այլեւ իրենց ու բա-
ղան պար տակ ան ու թիւնը լիւնը պիտի համա-
րէին ապա տամ բել եւ տապալզել այն դժո-
խային կառավարութիւնը, որ դատապարտում է
նրանց՝ մարդկային տարեգրութիւնների մէջ երբեւէ
պատահող ամէնաստորացնցը, ամէնապաման եւ յու-
սագութիւն ստրկութեան . . . Բարձրգոյն Դուան նման ա-
ւազակային կառավարութեան զոհերը պարտաւոր չեն
ամեննեւին հաւատարիմ լինել նրան եւ իր աւունք
ունեն իս որ տակ եւ այդ կառավարութիւնը ա-
ռաջին յարմար դէպքում . . . Աղդերի ամէնամեծ շահը¹
խաղաղութիւնը չէ, որովհետեւ կարելի է խաղա-
ղութիւն վայելի եւ անարդ վասութեան մէջ, ու-
րանալով ամէն սրբութիւն») . . .

1880 թ.ի աեպատճեմեր 23-ին բիթուանական հիւ-
պատոս Էվլըսուը գրում՝ էր կարինից կոմս Գրանվիլին.

«Միայն ժողովրդի համբերութեամբ, եթէ չոստութեամբ
եւ նրա զանազան խաւերի մէջ եղած կապերի թու-
լութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը,
որ արեւելեան սանջակները անցեալ տարի (1879)
հարկեցը բաժանելին չ ապստամեծ տարի մը եւ ցին կառա-
վարութեան. դէմ, ուոքի կանգնելով իր մի անձ»:

Տասը տարի այս խօսքերից յետոյ, այսինքն 1890
թւին նոյն տեղից գնդապետ Զարմսայդը արդէն հա-
զարդում էր.

«Վերջին տարիներու կարինի եւ ուրիշ գաւառ-
ներում կազմակերպող գաղտնի ընկերութիւններն ու
կօմիտէնները, գէնք ձեռք բերելու դիտաւորութիւն-
ներն ու փորձելով, վերջին ժամանակներու Վանգում եւ
շրջակայքում տեղի ունեցած դէպքերը — այդ ամէնը
յոյց է տալիս, որ իսկապէս գոյութիւն ունի խորին
դժգոհութիւն եւ իրաւ, տարօրին ակ կը լինէր
սպասել ուրիշ բան, քան դժգութիւնն»:

Լսենք և հեղինակաւոր Իօլէն Ժակմէնի կարծէը
այդ մասին.

«Բօնիան, Հերցոգօվինան, Բուլգարիան 1856 թւի
դաշնագրում արտօնեալ տեղ չէին բռնում. Այսանդ
նրանք մինչեւ անդամ չեն եւ յիշատակւած, ինչպէս
չեն յիշատակւած կրէտէն եւ լիմանանոր. Ինչու
ուրիշ եւրոպան եռանդուն կերպով շահագրաւեց
այդ կրիրների քրիստոնեայ ազգաբնակութիւններով
գեռ 1878 թւից շատ առաջ եւ ոչ մի պահանջ
չներկայացրեց Հայաստանի քրիստոնեանների վերա-
բերմամբ. Դժբախտաբար, ես ոչ մի բացատրութիւն
չեմ գրանում այս տարմբ վերաբերութիւնների համար
դէպէի զանազան աղքերը, բայցի այն, որ հայերը
փոխ ան ակ ապստամբ եւ ու բաշականացան
միայն գանգատներով. . . . Եթէ տաճկական հա-
յածանքները ճնշւած հայերի մէջ խորին իղձ են
զարթեցնում ստանալ ոչ միայն անձնական ապա-
հովութիւն, այլեւ ընդհանուր ինքնավարութիւն այն
հողի վրայ, ուր իշխել են նրանց նախնիքները, եւ
դաշնագրերի գծած սահմաններում. — այդ ամեններն
արդինք չէ ստորական ինարիգի, այլ մի պատ-
ւա բեր եր եւ ոյ թ մարդկային բնաւորութեան
համար, որ արիանում է աղէտների մէջ եւ չի բա-
ւականանում գոյութեան լոկ նիւթական պահանջ-
ների գոհացմար») . . .

Վերջապէս 1894 թւի փետրւար 20-ին ֆրանսիա-
կան գետան կամքնը իր կառավարութեանը տևած
մի զեկուցման մէջ իմիջ այլոց ասում է.

«Հիմ անցեալ տարւայ զեկուցումները ծանօթացրին
կեսարիայում. Մարզունում, Անգորայում տեղի ու-
նեցած դէպքերի հետ. . . իր անգթութեամբ Բարձրագոյն
Դուռը սրբ ագործ ծ ե ց հայկական շարժումը, որ
այժմ արդէն ունի իր նահատակները») . . .

Այդպէս ուրեմն — եթէ ձեւակերպենք նոյնիսկ վերև
յիշած անձերի բառերով — տիրող հանդամանքներում
հայկական շարժումը ոչ միայն ան խուսափելի էր,
որովհետեւ այդ էր պահանջում ոիրերի կացութիւնը. . .
ոչ միայն իր աւաց ի էր, որովհետեւ ուեւ ազգ պար-
տաւոր չէ անպատճառ հաշտւել „ամէնադաժան ստրկու-
թեան“ հետ կամմալ „անարդ վատութեան“ մէջ. . . ոչ միայն
շատ հասկանալի առաջարկ վատութեան մէջ. . . ոչ միայն
շատ կանալի էր, որովհետեւ դատարօինական կը
լինէր դրա փոխարէն տեսնել ուրիշ երեսով. . . ոչ
միայն նպաստ կամմալ ապահովածամբ համար ապահովութիւնը
այլ կերպ բարուգել — այլ և գեռ վաղուց պատ ասելի
է թիր որովհետեւ միայն նարկերի բաժանումը բաւական
պատւաբեր եր երեւ յոյ թ է, որովհետեւ ունի իր բազմաթիւ
„նահացականները“ — դժբակիս ժողովրդի բարօրութեան
գաղափարին զոհւած նահատակներ. . .

Յեղափոխութեան զործն ական ընթացքի մասին մար
խօսքը յետագննում է միւս անզամին:

ԲԱՅ ՆՈՅԱԿ ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԻՑՅՈՒՅՑԻՆ

„Ամէն մարզու և ազգի նամար նամուում
է ժամանակ, երբ աէտր է կանգնել բարիի
կամ շարի լողուօւ:“

Կան վայրկեանների ազգերի կեանքում, որընք ճակա-
տագրական են: Այդպիսի մի վայրկեանում է վիճակ-
ւած մեզ ապրել:

Տարիների մի շարք, մի փոքրիկ շարք թերեւս, և
վերջանապէս կր վճռելի — պէտք է արդեօք հայերս
ապրենք իրեւ մի ինքնուրուն աղդ, ընդունակ և տրա-
մագիր իրագործելու իր նեղքին անկախութեան մէջ
հաւասարութեան և ազատութեան իդէալները, թէ՞ ան-
դամատելու ենք, փոշիանալու և ցրելու աշխարհիս
չորս կողմը քաշ տալու համար մեր ողորմելի գոյու-
թիւնը իրեւ մի աշխանդ, ինչպէս այժմ Բեսարա-
բիայում, իրեւ վաշնառուների մի դատակարդ, ինչպէս
Վրաստանի շատ կէտերում, իրեւ ատւած մի գաղութ,
ինչպէս նոր աշխահնչեամուս, — և աւելի վատ քան այժմ,
որովհետեւ Բեսարաբիայում, Վրաստանում, նոր աշխա-
հնչեամում մինչև այժմ և այժմ համարաւոր էր և հնա-
բաւոր է վառել ու վառ պահել սրտերը այն զերմու-
թեան, որ արեւի նման հարածում է իր շուրջը մայր
հայրենիքը, մինչդեռ արտուհետեւ. . . Ի՞նչ կը լինեն այ-
սուհետեւ այդ և դրանց նման անյուր ու անջերմ մոլո-

բակները երբ հանգչի նրանց արեգակը, երբ Հայաստան լոկ աշխարհագրական և պատմական անուն դառնայ, երբ Հայերը ջնջւեն Հայաստանում . . . որովհետեւ նրանք կը ջնջւեն անպատճառ, եթէ մի քանի տարի էլ շարունակւի մեր եղեռնական անտարբերութիւնը այս ողբերգական ժամանակում, այս երկաթի բնաւորութիւն և անսահման անձնուղացքութիւն պահանջող ժամանակում, որի նմանը շատ քիչ է: Եղել մեր թշւառութիւններով լի պատմութեան մէջ . . .

մենք վառւում էինք անհամբերութիւնից, մենք խլում
էինք իրար ձեռքից ազգասէրի տիտղոսը, մենք ինքնակոչ
հալածւածներ, կեղծ նահատակներ էինք դառնում, մենք
վիրաւորում էինք, երբ կասկած էին յայսնում մեր
ընդունակութեան մասին զոհ բերել ամէն ինչ հայ-
ընենիք սեղանի վրայ, մեր միջօնատերերի կանալք Մեծ
Վարդանին էին տեսնում երազում, վիրաւոր Վարդա-
նին, որ իրենց էր աւանդում հայոց սուրբ դրօշը, մեր
բուրժուա ինտելիգէնցիան նոր Եղիշէ էր փնտում իր շա-
հատակութիւնները ապագայ սերունդներին կտակելու
համար . . .

Խակ այժմ . . . այժմ, երբ մեր կուիւը սրբագործւել
է թէպէտ կրաւորական, բայց ոչ դաշտավարազուրկ քա-
ջուռեմբ մեռած հաղարաւոր նահատակների արիւնով,
նրանց անմեղ որբերի ու թշւառ արիների արցունքով և
անվեհեր յեղափոխականների տւած հերոսական զոհե-
րով այժմ, երբ մեր վրայ ամէն կողմից տեղում են սրի,
բռունցքի, խարազանի հարւածներ՝ խառն քացիների և
թուքի հետ, այժմ, երբ ամէն մի հայից պահանջւում
է իր ամբողջ ուժը, ամբողջ կարողութիւնը, ամբողջ
հոգին, — այժմ՝ մենք յօգնել ենք, մենք հիասթափւել
ենք, մենք սկէպտիկ ենք դարձել, մենք խելքացել ենք,
ինչպէս ասում են, մեր հոսհոս Պօլօնիուսները և ոսկի
որսող Համբէտները:

Մենք խելօքացե՛լ ենք. մենք դիւանագէտներ ենք
դարձել. մենք շողոքովթում ենք ռուսներին, մենք նզո-
վում ենք Ներսէս Վարժապետանին, որ թշնամի դար-
ձրեց մեզ ռուսաց „Մարդասէր“ կառավարութիւնը, մենք
հայՀոյում ենք յեղափոխականներին, որոնք զայրացրին
բարեգութ, հայրախնամ և մեծահոգի ԱբդիւլՀա-
միդին. . .

ՍԵՆՔ ԽԵԼՈՔԱԳԵԼ ԵՆՔ. ՄԵՆՔ ՀՐԱԺԱԼԻԵԼ ԵՆՔ ԱՅ
ցՆՈՐԲՆԵՐԻԳ. մԵՆՔ ՍԱՊԵԼ ԴԱՍՈՂ ՄԱՐԴԻԿ ԵՆՔ ԴԱՐՁԵԼ.
մԵՆՔ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ, ՊԳԸՊՈՉՈՒԹԻՒՆ, ԱԳԻԱՎՈՅՄԱՍՈՒԹԻՒՆ,
ԵՆՔ ՔԱՐՈՂՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ, — ԱՆՈՐՈՇ բառեր, որնք
կը նշանակեն խսկապէս, նեթէ գայ ձեզ մէկը, որ խօսի
ազգի, պատւի, իդէալի, սուրբ վրէժի մասին, բռնէք նրան
և յանձնէք ոստիկանութեան, որպէսզի ակներև լինի
ձեր հաւատարիմ հպատակութիւնը. եթէքիւրդը դայ յա-
փշտակելու ձեր ինչքը և պղծելու ձեր սրբավայրերը,
համբուրեցէք նրա փէշը և գոհութեան ուղերձ ուղար-
կէք ձեր մօլաւ-պատրիարքին, որպէսզի չիշնամացնէք
համբիէներին. եթէ թիւրքը պաշտօնեան դայ ձեզ մօտ,
հեռացէք տանից և պատւիրեցէք ձեր կանանց սիրաշա-
չել թանկագին հիւրին, որպէսզի չգրգռէք հայի գէմ
աղբեցիկ միւսիւլմաններին... .

Այդտեղ է հասցել մեզ մեր խելօքութիւնը, այդ
պիշտապոսների խելօքութիւնը, որ աշխատում է պահել
իրեն հաւասարաչափ հեռու նաևող Ուժից և խաչ-
ող ձշմարտութիւնից, այդ ստրկածինների խելօքութիւնը,
որ հրաժարում է երկրորդ գնդակն արձակել աւա-
զակի վրայ առաջինը զբիղելուց յետոյ, այդ ապաշ-
խելօքութիւնը, որ երկրորդ անգամ չի ցանում արտը,
որովհետեւ առաջին հունձր փչացել է կարկուտից.

Ժամանակ չէ վերջապէս թքելու այդ գետնաքարշակութեան վրայ և գրկելու վեհ, դեպի երկինք ձողոր կեօթութիւնը, որ բոյոր մեծ հոգիների, Վար-

սկները երբ հանգչի նրանց արեգակը, երբ Հայաս-
տան լոկ աշխարհագրական և պատմական անունն դառ-
այ, երբ Հայերը ջնջեն Հայաստանում . . . որովհետեւ
որանը կը ջնջեն անպատճառ, եթէ մի քանի տարի
շարունակուի մեր եղեւնական անտարբերութիւնը
ողբերգական ժամանակում, այս երկաթի բնաւո-
ւութիւն և անսահման անձնուրացութիւն պահանջող-
ամանակում, որի նմանը շատ քիչ է. եղել մեր թըշ-
առութիւններով լի պատմութեան մեջ. . .

Մեզ մորթում են Թիկլքիայում, բացարձակ, որ ցե-
նեկով, Հարիւներով ու Հազարներով՝ կամ առանց աղ-
ուկի, կամաց-կամաց, քիչ-քիչ խուլ անկիւններում, գի-
ւերւայ. Հովանու տակ,—մեզ այլասեռում են այնտեղ,
և սովորեցնում են տանել ամեն ստորութիւն, մինչև
անտարբերութիւնը դեպի Հարազատ կանանց պատեւը.
Եզզ թշւառացնում և անասնացնում են այնտեղ մինչ
այն աստիճան, որ երեսուն արծաթով. . . . ոչ երեսուն
զորքուշով ծափում ենք մեր կրօնը, մի քան, որ Հա-
մոզմունք է, որ սրբութիւն է մեր գիւղացու համար,—
մեզ հալածում, ստորացնում են կովկասում իրեւ
մի յետին հրեայի; մեզ վարժեցնում են այնտեղ իրեւ
պատիւ ընդունել եթէ մի լիրք, մի Հարբեցող, մի կա-
շառակեր ուսու պաշտօնեայ բարեհաճում է մեզ բարեկել
մեզ պատիրում են այնտեղ շնորհակալութիւն յայտ-
նել որ չեն մորթում մեզ, այլ միայն թքում են մեր
երեսին, մեզ այն աստիճան՝ տմարդացնում են այնտեղ
որ Հազարներ ենք տալիս օրթօղօքս եկեղեցի հիմնելու
այն բոպէին, երբ Գօլիցիին և Եանօվսկի վանդալի և աւա-
զակի նման փակում են մեր գպրոցները, իւլում են
նրանց կայքերը և իւղաթիւրում. մեր բարեգործական
հիմնարկութիւնները. . .

25. մենք ունեցել ենք թերես նոյնպատճշառ տարիներ, բայց երբեք մենք այնպէս ընկած չենք եղել բարոյապէս, ինչպէս այժմ:

Բաւական չէ, որ մեր քունը չխանդարւեց և չի խանդարւում Օսմանեան Հայաստան կոչող դժոխվի սարսափներից, մենք ապացուցինք աշխարհին, որ միանդամայն զուրկ ենք ազգային ինքնասիրութիւնից, բաւական չեր, որ չգիտենք պաշտել սիրել, գոնէ կարեկցել ինչպիս հարկն է Նահատակին, մենք ցոյց տւինք, որ չգիտենք նոյն իսկ ատել մեր եղբայրների դահիճներին և մեր երեսին թքողներին:

Եթէ լուենք գոնէ, եթէ յաւակնութիւններ չունենայինք, եթէ խոստովանէինք, որ մենք սողուններ ենք մարդկանց մէջ, սարուկների զաւակ և վիճակւած անվերջ սարկութեան... Քայլ չէ, մենք ստորանում ենք սակայն փախչում ենք ստոր անունից, մենք թէօրիաններ ենք ստեղծում մեր վատութիւնը արդարացնելու համար, մենք միջին ձանապարհներ ենք փնտուում բարոյականի և անբարյականի մէջ, սուտի և ծշմարտլ մէջ, մենք հաշտեցնել ենք աշխատում գառներին գայլ մերի հետ և փոփոխում ենք սովորական բառերի իմաստը, խենթութիւն կոչելով անձնուրացութիւնը, խոչ չեմութիւն՝ եսականութիւնը և խելօքութիւն՝ փոքրոգութիւն:

Ոլքան փոխւել ենք մենք մի քանի տարւայ ըն
թացքում:

Երբ սկսում էինք լուրջ կոխը դարձաւր ըստակալ
ու դահճի գէմ, մենք եռանդ էինք ու ոգեսորութիւն

գամայն բոլոր աղնիւ, բոլոր սրաի և խղճի մարդկանց խելօքութիւնն է, որքան և Սահմանափակ լինեն այդ մարդկանց ուժերը, ընդունակութիւնները և ձիքերը:

Ժամանակն է, վաղուց ժամանակ, որովհետև այդ խելօքութեան, միմիսյն այդ խելօքութեան մէջ է մեր փրկութիւնը:

Ժամանակն է, որովհետև եթէ մի անգամ ել աղա-չող լինենք քաղաքական յարմար առիթում, կըսպանենք վերջնապէս հայկական հարցը, իսկ անպատճառ իբրև յուրացկան կը ներկայանանք և ապագայ դէպքում (որ կարող է միակը լինել այսուհետեւ), եթէ բոլոր հայերս, և ամենից առաջ մեծք, մեզ երկրի աղ համարող ինտէլիդէնաներս, չարենք մեր բոլոր ուժերը առաջ տանելու և աւելի ու աւելի հիմնաւորելու, աւելի ու աւելի ընդարձակելու համար յեղափոխական գործը Թիւրքիայում:

Ըստապէնք ուրեմն, որովհետև արագ արագ մօտենում է ճակատագրական ժամը, և ամէն րոպէ, որ մենք կորցնում ենք մեր անտարերութեան մէջ, գերակռութիւն է տալիս մեր ոխերիմ թշնամիներին:

Թօթափենք մեր վրայից այդ անարգ անտարբերութիւնը, եթէ չենք ուզում, որ ապագայում ինտէլիդէնցիայի անունը դառնայ արատի, ամօթի և նորվքի անուն:

Օսմաննեան Հայաստանը կուռում է, Օսմաննեան Հայաստանը օգնութեան է կանչում. այնտեղ են մեր եղբայրները, թշւառ հայ ազգի ամէնաթշշւառ անդամները. այնտեղ մենք իրաւունք ենք ձեռք բերել արդէն, արիւնով և դաշնադրերով հաստատած միջազգային իրաւունք, որ խոստանում է մեզ վերջապէս ազտա մի անկիւն, ուր հայը չի համարել „գեճավուր“, „արմեաշկա“ կամ „թափառական հրեայ“, այլ մարդ, մարդ օժտւած մարդկային բոլոր իրաւունքներով. այնտեղ է բարախում այժմ մեր ցեղի սիրաը, այնտեղ է ծածանում յեղափոխական դրօշը, որ իր ծալքերում կրում է մեր ազգի պատիւը և աղատութիւնը:

Խմբւենք այդ դրօշի շուրջը. ցոյց տանք եւրօպային, որ մենք ուժ ենք, թէ և փոքր ուժ, բայց ոչ անօգուտ մէջ ուժերի մըցման մէջ. ստիպնենք սուլթանին իրագործել ու էֆորմների հրագիրը, մէջ պետութիւններից առաջարկած և իր հաւանութիւնը ստացած ծրագիրը, որ սաղմն է լինելու Օսմաննեան Հայաստանի ինքնավարութեան:

Դէպի յեղափոխական դրօշը, ինտէլիդէնտ եղբայրներ:

Կովկաս, 5 սեպտեմբեր

ՀԱՅԻՆՑԻԳԻՆՏ ՀԱՅ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

ՆԱՄԱԿ ՄՈՒԾԵՒ

10 յուլիս 1899

Մուշի և Սասունի մէջ գարունէն իվեր կատարւած ուշադրութեան արժանի գլխաւոր անցք անցք բերն են ով կը փութանը հրատարակութեան տալ:

Սասունը սուլթանին աշքի փուշն է եղած. չի կրնար բնաւ հանդուրժէր, թէ հոն հայեր կան ու կը մնան, թէ այդ տեղէն երբեմն խլրտումներ և յու-

գումներ ծագած են, ու իր հանգստութիւնը խոռված: Քանի մը փորձեր կատարեց՝ այդ լեռներէն վար իջեցնելու Սասունի ժողովուրդը. բայց երբ շօշափեց տեղացներուն կարծիքը, առժամապէս ետ կեցաւ այդ ծրագիրն իրագործելէ: Սասունցին պատրաստ է կրկին կոտորի, ոչնչանայ, քան հեռանայ իր սարերու ու քարերու մէջէն:

Բայց անցնինք դէպետրուն:

Ծանօթ գործիչ ԳՈՒՐԳԻՆ ժողովուրդը անձամբ այցելելու և ոգեորելու համար դաշտ իջած էր. քանի մը տեղ հանդպէլէ ետքը՝ ապրիլ 21-22-ին կը հասնի Յոթնը գիւղ, ուր կը գտնէ մելք ֆէդայիներէն երեքը. ասոնք օր առաջ մասնաւոր տեղեկագրերով ու նամակներով ճամբար ելած էին արտասահման անցնելու և իբրև պատգամաւոր մեր կողմէն վճռական առաջարկներ տանելու: Դեռ յայսնի չէ մեզ, թէ ի՞նչպէս կամ որո՞ւ միջոցով գաղտնիքը երեան եկած է, — միայն այսպանը գիտենք որ Մուշին Բաղէշի կուսակալին հեռագրով իմաց կը տրի ֆէդայիներու ներկայութիւնը Յոթնք: Կուսակալը առանց րոպէ կորունցնելու Մուշի երելիներէն և ժողովուրդի արիւն ծծողներէն Ցալիա է Փէճնտին հեծելազօրքի հրամանատարին և մօտ 200 զօրքի ընկերակցութեամբ կը ճամբար Յոթնք: Ասոնք գիւղը հասնելուն պէս լուր կը խրկեն անմիջապէս շրջաբնակ քիւրդ գիւղեր, և գեռ ժամ մը չանցած կը հասնի սովալլուկ ամբոխը, որ արդէն սովոր՝ միայն առթի և հրամանի կըսպասէ հայը կոտորելու ու թալլելու: Ցալիա է Փէճնտին իր վայրագ արարքներով արձան կը նեղէ գիւղեցները, անքան գազանութիւններ գործ կը գնէ անոնց վրայ, որ ճարահատ ֆէդայիներու տեղը ցոյց կուտան: Ապրիլ 25-ի կէսօրն անցած էր երբ Գորգէն: իր ընկերներուն հետ կը պաշարւի մարագի մը մէջ:

Վըսի թէ նախապէս հայերու կողմէն լուր տրւած: Էր իրենց թէ „Անհոգ մնացէր, գիւղը նաւթ չկայ, կրակի չեն կրնար բռնեն ձեզ“: Գիտնալով Գուրդգէնի անձնւիրութիւնը, մեր ֆէդայիներուն անօրինակ ուժն ու քաջութիւնը, հաւանական է ենթադրել որ վճռեր էին սպասեն ու կուեն մինչև իրիկուն և ապա մութին դուրս գան մարագէն:

Ֆէդայիները պինդ պաշարւած են: Զիաւոր ոստիկան մը լուր կը տանի Մուշ, և այնտեղի զօրքն ալ կը հասնի օգնութեան: Այդ խուռն բազմութիւնը դեռ չի համարձակիր մօտենայ, միայն հեռուեն հրացանի բազմաթիւ գնդակներ կը թափէ կարկտի պէս մարագի գուան ուղղութեամբ: Գուրգէնը վերջին իրախոյս մը տալով կ'առաջարկէ որ երգ սկսին: Գնդակներու սուլցին կը միանայ ֆէդայինական ուազմերգը.

Կուսցէր, տղինը, կուսցէր քաշ:

Ան քրկերը փախչին սարսափած...

Եւ քիչ մը ետք՝

Մնար բարեաւ սուր, գրախու, Մնար բարեաւ, ըսկերներ...

Ֆէդայիներու ներդաշնակ և խրոխտ ձարնէն մինչեւ իսկ հրամանատարը կը յուղի ու կը հրամայէ որ պահ մը դադրեցնեն հրաձգումը „ներանի“ թէ միայն երգէին ու չկուեկին կը գուէ: Մեր անվիշեր ըսկերները կը շարունակեն կուրը և կըսպասեն արեւի մօնելուն, բայց աւաղ հաշիւնի դերեւ կ'ելլայ, մօտակա, գիւղէ մը քիւրդգէրը նաւթ կը հասնեն ու մարագը կրակի կուտան:

Մարագը կը բռնկի, մուելը կը լցուի ներս: Կրակ ու ծուխով շրջապատած՝ ֆէդայիները կը վճռեն գուղը գան: Դրան սեմին վրայ առաջին նահատակը կ'ըլլայ ՓԱՐՍՍԴԱՅԱԼ: Միւսները կը յաջողին մինչև գուղը կ'ելլան կուելը համար: Բայց ինչ ընէ ութը՝ ութ հարիսրի գէմ: Երբ չկայ պատնէշ մը, երբ չկայ դիբք մը, մինչդեռ թշնամին՝ պատնէշներու ետևէն՝ պատրաստ կը սպասէ մարագի գուղը նշան առներու: Հարիսրաւոր զնդակներ միաթափ կը տեղան և հօն՝ իրարու ետևէն կ'իյնան, ՌՈՒՏԻԿՆ, ՏԻԳՐԱՆ, ՆՇԱՆ, ԱԾՐԴԱՆ, ԿՐՊՈ: ԳՈՒՐԳԻԿՆԱԼ թէկ վիրաւոր, կը յառաջանայ բաւական տեղ բայց ուժասպառ՝ կը նստի ձորակի մը եզրը քարի մը վրայ ու իր վերջին գնդակները կ'արձակէ....

Բայց այդ առիւծները անիրէժ պիտի չմեռնէն, այնդան շունչ այնքան արև ունեցան, որ արիւնթաթաւ ձեռքերով գետին տապալեցին հրէշ Տալիպը, Հրամանատարին աներձագը՝ չասան պէջ, չորս զինոր և չորս քիւրդ: Կ'եցցէ՛, յեղափոխութիւն, կ'եցցէ՛ հայութիւնն եղաւ իրենց վերջին աղաղակը:

Ֆէդայիներէն մէկը բռւլանը թի ՄԿՐՕՆ աննկարագրեցի քաջութեամբ ձեղքելով պաշարող զօրքի շարքերը՝ մօտ երկու ժամու ձամբայ կը կարէ ու կուելով՝ կը հասնի Մեղրագետի եղեղը: Արիւնախումթըշնամիները չեն համարձակիր մօտենան հայ ֆէդայուն, թէկ մենակ է ու առանց ընկերի: Այդ միջոցին Մեղրագետի միւս եղեղքէն կ'անցնէր Մուշէն Ցրոնք օգնութեան գնացոր խառնիձաղանձ խումբ մը: Երբ կը նշմարեն. Մկրօն, առաջը կը կտրեն. Ֆէդային անկարող է այլ ևս այդ ամբոխը ցանցրիւ ընելու. սպառած են փամփուշտները... և վիրաւոր գետին կ'իյնայ: Երբ կը մօտենան իրեն՝ ծունկի կուգայ ու ցոլացնելով սուրը որոտաձայն կը պօռայ. „Եկէք, ձեր պատիժը այս ձեռքերէն պիտի առնէք“: Վատերը սիրտ չեն ըներ հարկաւ և հեռուէն հրացանով կըսպաննեն քաջը:

Այրենի ամբոխը իր զայրոյթը կը թափէ անշունչ դիակներուն վրայ: Գուրգէնին գուղը կը կտրեն կը տանին իրը յաղթանիշ մը: Ապրիլ 26-ի առոտոն նահատակներուն մարմնները բերին Մուշ և կառավարանիստ շէնքին առջև թողեցին, արևու տակ, օրնիբուն: Իրիկան դէմ առաջնորդարանէն բերել տալով քահանայ մը: Հրամայեցին որ կրօնական արարողութիւնը կատարէ: Ռստիկաններուն հսկողութեան տակ մշակներ շալկեցին քաջերուն մարմնները ու տարին քաղաքին հարաւարեկեան գերեզմաննոցը, ուր առանց պատանի թաղեցին անկիւն մը՝ քովի բայց տարոնցին գուրգուրանքով պիտի պահէ անոնց անշուք շիրիմները պագայ: Սերունդներու յարդանքին համար...

Այդ օրը Մուշի սգաւոր հայ ժողովուրդին միակ միթթարութիւնն էր իրենց աչքին առջև փուած տեսնել Տալիպին սատակը, որուն վրայ անհօւն վայնասուն և լացուկոծ կ'ընէին թիւրքերը: Անպատում են անոր շահատակութիւնները, գաղանութիւնները ու սիսակմական հարստահարութիւնները. Մուշի ժողովուրդը միայն կրնայ գնահատել Տալիպի մահան արժէքը: Այդ արիւնկակը գետ վերջերս Բաղէշ երթալու միջոցին, դաշտի քանի մը հայ գիւղերը մտնելով կ'ըսէ. Անպաշխարեցէք, ձեր կըսնական արարողութիւնները կատարեցէք: Այդադին վերադարձի վնասի մը գուղը կ'արդիւն իրարու ետևէ սկսաւ դաշտի մէջ երենելի անձերու սպանութիւնները: Ապրիլ 28-ին կէս օրւայ պահուն քանի մը գիւղերը հիւր կուգան Ալ վառ ի ին ճ գիւղի ու է՛ Աշհան անուն հարուստ երիտասարդին տունը, ուր նստած կը գտնեն երկու

վերադարձաւ, և ֆէդայիներուն օրհնեալ գնդակը արդպատուհասէն ալ աղատեց Տարօնը:

Ակներեւ է թէ այս գէպքին ատեն Ցրոնք գիւղը զերծ պիտի չմնար: Էրտանէ: Այն պահուն երբ մէր քաջերու գնդակներէն վիրաւոր կը զըսորուէն սուլթանին զինւորները, ասոնց մէկ մասը միացած խուժանին հետ, իր կատաղութիւնը կը թափէր խեղճ ցրօնցիներու վրայ, կըսպաննեն գիւղապետ Նար-գանին եղայլը: Դաւօն, կըսկսի իրարանցում ու փախուստ. սիրտ պէտք էր որ գիւմանար այդ սրտամկին տեսաբանին, մայրերը իրենց մանր երեխաներ առած, ցիրուցան կը փախչին դաշտը, չեն գիւղերը ու դիմումը գիւղերը կ'եղական անդամ շուներն ալ կը տանին Ցրոնքը դաշտի նշանաւոր և ամենահարուստ գիւղերէն մէկն էր—300 տունէ աւելի ունէր — և ահա քանի մը ժամաւան մէջ մոլորւած ոչխարի վրայ նստաւ...

Կառավարութիւնը շուտով հասկցաւ սակայն որ շատ հեռու գնացեր էր, և մէկ-երկու շաբաթ չանցած, զինւորներ ցրւեց այս ու այն կողմ և սկսաւ ցրօնցիները ժողովել ու յորդորել որ գիւղ վերագառնան, կրկին աշխատին, կրկին վաստակին... Ցրոնքի աւելին ու տառապանքը բաւական էր, կառավարութիւնը ձերբակալել տւաւ գիւղին երկու քահանաները, սախկին ու էս Սլոն և որդին Ստեփանը մարագի տէրն ու կինը, քանի մը ուրիշ անմեղ գիւղացիներ ալ ամբողջը տասնումէկ հոգի խեղճերը գեռ կը հիւծին բանտին խորքը:

Այս անմոռանալի գէպքէն ետք սկսաւ ընդհանուր սարսափ, թալան, սպանութիւնն. անխտիր որ հայուն որ պատահէին՝ կըսպաննեին, ինչ գիւղի գողք կամ գոմշ ու նզ տեսնեին՝ կը տանին ննչպէս վերե ըսի, մսիթարական էկտը հայերուն համար Տալիպի սատկին էր, անոր մահը մէծ կորուստ էր կառավարութեան համար և մէծ զայրոյթը ու գրգռում առաջ բերաւ թիւրքերուն մէջ ոչ աշարիր հազարաւոր հայերու արիւնը թափենք, նորէն Տալիպի վրէժը չէ լուծակիր“, կ'ըսկին իրարու: Վայրկեանէ վայրկեան կոտորած կըսպատէք. հայերը շուկայ, խանութ թողած, քաջւած էին տուներնին, թիւրք ամբոխը միան հօնք բազմութեամբ փողոցներու մէջ կ'երեւէր: Թէկ այդ գէպքէն ետք, շնորհ հիւն վեհան փառ ու թիւն տիրեց, ամեն մարդ գարձաւ իր գործին, բայց կարմ աւելց, որ մըն ալ յանկարծ իրարանցում և փախուստ սկսաւ: Մշոյ-Զորի թաղեցի Ըահէն անուն վայառականը, Տալիպի տան առջևէն անցած ժամանակ, տնէն քանի մը զինենեալ թիւրքն գուրս կուգան և կըսպաննեն խեղճ մարդը: Առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետն ալ կառավարութեան դունէն գուրս նլելըւն, ետևէն դաշտով քանի մը անգամ սպանութեան փորձեր էր կատարին, բայց քանի մը թիւրք աղաշտունեաներ տեղը անյարմար դատելը կ'արգիւնն իրարու ետևէ սկսաւ դաշտի մէջ երենելի անձերու սպանութիւնները: Ապրիլ 28-ին կէս օրւայ պահուն քանի մը գիւղերը հիւր կուգան Ալ վառ ի ին ճ գիւղի ու է՛ Աշհան անուն հարուստ երիտասարդին տունը, ուր նստած կը գտնեն երկու

ոստիկաններ ալ Երբ Վահանը տուն կը դառնայ անկողին բերելու քիւրդ աղաներուն, ետևէն հրացանի գնդակներ ուղելով՝ գետին կը փոքր խեղճ երիտասարդը և իրենք անհոգ կը հեռանան: Ներկայ եղող ոստիկանները ուրախութեամբ կը դիտեն այդ սպանութիւնը ու կանցին կերթան: Նոյն ձևով սպաննեցին ՇԼ կ գիւղի Մելքիսեդեկ քահանան: Աւազ զայր գիւղի գիւղին աղքատիկ մայր մը իր 10-12 տարեկան զաւակին հետ գնացած էին դաշտէն բանջար բերելու. երբ վերադարձը կ'ուշանայ, գիւղացիք կ'երթան փնտուելու, և անոնց դիակները կը գտնեն, բարբարաները 24 տեղէն վերաւորեր էին փարբիկ պատանին: Սպաննեցին Առն իս գիւղի ուս Խօզն, Թիւ գիւղի Խաչըն և երկու քահանայ: Ս. Կարապետի մօտիկ մորթութեցին երեք մարդ: Ապրիլ 26-ին Աղջան գիւղ աւարի տւին և երեք հոգի սպաննեցին: Մայիս $\frac{2}{14}$ -ին Ռիալ գուռ և կուրա վու գիւղերուն լուծքի դաւարները, բերդակ գիւղի ամբողջ ոչնարները տարին և սպաննեցին Տօնո անուն հայը:

Ցրոնքի գէպքին առմիւ պաշտօնանկ եղան տեղիս միւթէ սարի ֆը (կառավարիչ), անհոգ գտնւելուն համար, և առաջնորդական փոխանորդը իրը յեղափոխականներու ընկեր և անոնց շարժումներուն տեղեակ ըլլայու ամբաստանութեամբ: Բաղեցի կուսակալը Մուշեկաւ իրը թէ քննութիւն կատարելու և կը բնակի Տալիպին տունը, սահկայն հայու բողոքն ու ձայնը անլսելի է. „Ես չեմ կրնար ձեզի պահպանել“ կըսէ ու կը ձամբէ:

Այլ խօսւի իրը թէ կուսակալը հրահանդ տւած է անհետացնեն գաւառի մէջ աչքի զարնող անձնաւորութիւններ — և ահա կ'իրականանայ: Կուսակալը Մուշ դալուն պէս անմիջապէս 200-էն աւելի զօրք խրկեց Խասուն, հայերը քրդերուն գէմ պաշտպանելու պատրւակով: Զօրքը հոն հասաւ չասաւ Գէլի է կուրա զան, Սէման Ըէն ըք, և միւս գիւղերուն մէջ սկսաւ գաղանային հարկահանութիւն մը: Խոպատակին է դառն Ճնշումներով այդ անօմի ու ծարաւ ժողովուրդը իր գիրքերէն քանդել, հանել ու ցիրուցան ընել: Վերջերս Սասունի մէջ երեք նշանաւոր քիւրդեր անյայտացած էին, և ահա ատոնց փոխարէն սպաննեցին Հեթին ք գիւղէն, եօթը մարդ և Դալան իւ ի կի կողմերն աւ տասնէն աւելի: Հեթին քը այրեցին և աւարի ալ տւին: Մայիս $\frac{7}{19}$ -ին փողոտեցին ս. Աղբէրիկ վանքի Ղազար վարդապետը իսկ կառավարութիւնը բռնի ստորագրութիւն տառա վանքի միաբանութենէն՝ թէ վարդապետը սպաննեած է հայ Փէդայիններու ձեռքով: Բուլանը իսօշ-Գեալուի գիւղը ամբողջովին աւարի է դրւած, գիւղի գզիրն ու քանի մը ուրիշ գիւղացիներ սպաննեած են իրեւ Փէդայիններ: Երեք հոգի ալ կուրա սպաննեած է: Այս պահու լսենի որ կուսակալը՝ հրաման ըրեր է Սասունի գիւղերու գլխաւորներ Մուշ տանին, մօտ 22 հոգի:

Ալ տարմակոյս չկայ, որ կուսակալը բարձրագոյն հրամանով և հրահանդներով եկած է, փոթորիկ մը առաջ բերելու և կրակ մը վառելու ժողովուրդի գլխուն. առիթներ կը փնտուէ միայն: Ժամանակ ու միջոց չունիք յականէ յանւանէ և մանրամասն իւելու կատարած սպանութիւնները, խժգութիւններն ու գաղանութիւնները. այդ բոլորը եթէ ցարդ գիմակի ներքեւ

և գիշերով կը կատարւէր, այժմ ցորեկով տեղի կ'ունենայ անարգել և բոլրովին բացարձակ: Մէկ ամսւան մէջ սպանութիւններու թիւը հարիւ ու ը ը անցաւ արդէն... 2եմ ուղեր թւեմ կիներու և աղջիկներու առևանդումները և հարկահանութիւնը իրենց յարակից քստմնելի արարքներով — այդ ամէնը սովոր ական ը աներ ու կարգն անցած է...

Ահա մէր կացութիւնը. գոյք, ստացւածք չմանց. պատիւնիս անարգւանծ է, սովոր կըսպառնայ, կեանքը դժոխային է. փախչելու ալ միջոց չկայ...

ՆԱՐԱԿ ՎԱՆԵՍ

30 օգոստոս 1899

Մեր խոստումին համաձայն — թէ բաւական ուշ — աւելորդ չենք կարծեր քանի մը մանրամասնութիւններ հաղորդելու այն կատաղի ընդհարման մասին, որ 18 զինակիր ընկերներ յունիս ամսուն ունեցան քիւրդերու հետ Խօշար գաւառին մէջ:

Զինակիր խումբը կը հանգստանար Բագիզար (Պաղի դալ) լեռան գիմաց գտնւող բլու ստորոտը, ձորին մէջ գիշերաւան ժամը մէկն էր արդէն: Ընկերներէն երկուքը, որոնք զուրի գացած էին, յանկարծ շան հաջիւն կը լսեն: Անախորժ անակնկալ մը՝ չէին գիտեր թէ քիւրդերը վրան զարկած էին հոգի քիւրդերու ներկայութիւնը ստուգելով խումբը կ'որոշէ ապահով դիրք բռնէ ու կը բարձրանայ բլուրը, ուր կը հասնի լրւսարացին: Այդաեղ կը յուսային թէ աննկատելի մնան և գիշերը շարունակեն ձամբանին: Բայց պատահամբ հոն գտնւող քիւրդը մը ետեւը: Քիւրդին ներկայութիւնը գալունի չի մնար երկար. խումբը իր դիրքը քննելու ատեն կը նշանարէ թագնւած թշնամին և կը ջանայ բռնել: — Հրացան չեն արձակեր իրենց գոյութիւնը չմատնելու համար — քիւրդը կը պրծնի սակայն ձեռքերնուն և կ'երթայ լուր կուտայ:

Օդնութեան աղաղակի վրայ մերձակայ վրաններէն իսկոյն 25 ձիաւոր քիւրդ կը փութայ բլուրը: Ֆէդայինները տեսնելով որ կոիւն անխուսափելի է, անմիջապէս կ'որոշեն թողնեն: Իրենց գիրքը — որ կուելու աննպաստ էր — և փութով կ'աճապարէն Բագիզար լեռան գագաթը: 2որմ ընկերներ փութով տեղ կը հասնին ու դիրք բռնելով՝ հրացան արձակել կըսկսին ձիաւորներու վրայ, որպէսզի ետ կեցնեն ասոնք և միջոց տան միւս ընկերներուն լեռ բարձրանալու: Այդպէս ալ կը յաջողին, և քիւրդերը երեք կորուստ տալով կը ձգեն կը փախչին: Խումբը այդ փախուստէն կ'օգտի և լեռան գլուխը ապահով գիւղի ու բարձրանալու: Այսպէս թշնամու գալուն:

Կէս ժամ հաղի անցած՝ քանի մը հարիւր քիւրդ կը խմբի լեռան ստիրուսը: Խըսկսի կատաղի կոիւնը, որ քանի մը դադարներով կը տեսէ մինչև իրեկաւ մութը: 18 զինակիրները այդ օր մօտ 1500 գնդակ արձակած են: Երկու ընկեր զոհ կ'երթան՝ սպարկերցի ՍԻՄՈՆԸ որ ձակատէն մահացու վէրը կըստանայ, և կուռուբացի ԿԱՐԱՊԵՏԸ (Կարօ) որ սրան ստանալով գնդակը, վայրկենաբար կ'աւանդէ հոգին...

Երկուքն ալ իրենց անխօնիքմ յանդգնութեան զոհերն
են. երբ քիւրդերը խոշոր քարերու ետեղ թագնւած՝
դիրք բաներ կըսպասէին, այս երկուքը իրենց դիրքերէն
կը բարձրանան որ քարերու ետե ապաստանած քիւր-
դերուն նշան առնեն, և իրենք կը գարնեին:

Թաշնամին 60 չոգի կորուստ ունեցաւ:

Մութն իյնալուն՝ քիւրդերը կը քաշւին, և խումբն ալ կը պատրաստէի խաւարէն օգտուելով հեռանայ ու հետքը կը ըստնցնէ: Բայց Սիմօնը հոգեւարքի մեջ է գեռ և աշուելի. կերպով կը չարշարի. ընկերները կը խորհին որ եթէ այդպէս թողնեն երթան, քիւրդերը պիտի գան տանջեն զինքը, ուստի ընդհանուր համաձայնութեամբ գնդակով մը վերջ կը դնեն նահատակին տանջանքներուն. . . Այդ տիսուր պարտքը կատարելէ ետք խումբը կիջնէ հիւսիս-արևմտեան ուղղութեամբ: Քանի մը քիւրդեր, որոնք քարերու ետև թագնւած կը սպասէին, խումբին հեռանալը նկատելով 4 հրացան կը պարպեն անոր վրայ. ընկերներէն մէկը կը վիրաւորի ազդրէն. Վէրքը անվտանգ էր, իսկոյն կը կապեն և ճամփանին կը շարունակեն:

Խումբը կը հասնի Զէնիսի Հաշու (⁽⁵⁾) ձորը ու գիրք
կը բռնէ: Ամբողջ օրը կը հանգստանան այդտեղ: Ի-
րիկւան դէմ, արևի մտնելուն 3 ժամ մնացած, քիւր-
դերը կը հասնին ու կը շրջապատեն, և այս անգամ
կանոնաւոր զօրքի վաշտ մը իրենց հետ: Չորս ժամ՝ կը տեէ
անհաւասար կոխւը. Փէտայիները ստէպ-ստէպ կը փոխեն
դիրքերնին, տեղի անյարմարութեան պատճառով:

Օրը մժնելուն, կռիւը կը դադրի, և խումբը իսկոյն
ճամբար, կ'ելլէ:

Ազգը էն վիրաւոր ֆեդային խումբին հետք քալելու
անկարող ըլլալուն՝ ուրիշ ընկերոջ մը հետ ետ կը
ճամբեն գինքը, մէկ հրացան մըն ալ տալով իրենց ա-
պահովութեան համար: Ասոնք անվտանգ տեղ հասած են:

Իսկ զինակիր խումքը յաջողութեամբ կը շարունակէ իր ճամբան դէպի ներս և այս անգամ առանց հետք մը թողնելու:

תְּלִינָה וְתַּבְּרָנָה

5 (17) սեպտեմբեր 1899

Եւ Օրմանեան Հրաժարեցաւ . .

Եւ ինչո՞ւ պիտի չընէր, երբ այդ մէկ հարւածով
երկու նպատակի կարելի է համնիլ: Անէկ նպատակն է,
ըստ Օրմանեանի փոտած աստածաբանական ուղղղին՝
միամիտ հայերը անդորրել անոնց աչքին բարձր դիրք
մը ստեղծել խսկ միւսը՝ իր սիրած փատիշահէն ոսկոր
մը փրցրներ, նւէր մը առներ:

Սուլթանը պատասխանած է Օրյանեանին, որ իր ամէն պահանջները կատարւած են արդէն. . . ու հրամայած է կազմել Յոգիէ յանձնախումբ մը Հայոց փաթ-րիկին՝ պահանջներն ու բողոքները քննելու համար. Յանձնախումբին Յ անդամներէն մէ կը իրը թէ Հ. ա. յ.

Ե, որովհետև Ա ը թ ի ն փաշա կը կոչւի Միւսները
արդէն թիւրքեր են: Ա զուք հասկցէք մացածը: Հինգան
ու լիրք կատակերգութիւն մըն է որ կը խաղուի վերստին:

Խայտառակ, անամօթ խաղ մը, ճիզվիթական փարս
մը... ալդ հրաժարականը:

Իրողութիւնը հետևեալն է:

Գոմիշի կաշին աւելի կարծր երևս ունեցող Օբ-
մանեան, վատերուն յատուկ վախկառութեամբ, կը սոս-
կայ, կ'ընկճակ ամէն կողմէ իր գլխուն տեղացող սպա-
ռագրերէն և հանճարեղ միտք մը կը յշանայ:

Ըղաբերական մը կը դրէ և նիստի կը հրաւելիք Խառնովի բոլոր անդամները. „Անպատճառ ամէն մարդ ներկայ լլլալու է կարեւ օրագոյն եւ սա ի պողական ին դրի մը համար“ և այլն: Ըղաբերականը ցրւելու կ'ըլլայ բոլոր ժողովականներուն, իսկ ձեռքի տակէ կ'իմացնէ Պէրայի կառավարիչ Էնվէր պէյին, որ կերպով մը ձեռք անցընէ անոր մէկ օրինակը... Էնվէր պէյ կը ճարէ օրինակ մը, կը կարգայ և կանխագոյն համաձայնութեան մը համեմատ, պալատ կը վազէ. „Կարեւորագոյն, ստիպողական խնդիր“ — ի՞նչ կը կընայ ըլլալ... հրաժարականի խնդիրն է...

Սուլթանը կը կանչէ իսկոյն Արթիս փաշան իսկստ
հրամաներ կուտայ ու կը ճամբէ ժողովի:

Ամենքը կը գումարեին: Պատրիարքը կը բանայ նիստը:
„Ասանկ ծանր պարագաներու մէջ ես անկարող եմ. . .
երբ իմ ձայնս չի լսիր“ . . .

Արթին փաշան կ'ընդհատէ խօսքը. կ'ելլայ տեղէն
ծանր-ծանր և ողբերգական, ազդուու ու լուրջ շեշտերով
կ'արտասանէ. «Ով իր բերնէն հանէ հը աժ ար ա-
կ ան բառը՝ ոտ է օ վլէ թէ ին այ ի ն» կր նկատեի.
աս է վեհապետիս հրամանը: Կը նստի: Թէ պատ-
րիաքը, թէ ժողովականները կատու կը դառնան, և ափ
իբերան կ'ելլան կը ցրւին իրենց տուները, առանց բառ
մը արտաքերելու:

Խաղը կը յաջողի: Ո՞չ բերանացի, ոչ ալ գրաւոր
հրաժարական չկայ մէջտեղ. բայց . . . ով ծիծաղ, Օրմա-
նեան ասոր անոր կ'ըսէ թէ ինքը անձայն հրա-
ժարական մընէ. . .

Ա ն ձ այն հ ր ա ժ ա ր ե ա լ ... աս ալ նոր գիւտ մը:
Օրման-Տատեան այս լկտի կատակերգութեան վրայ
ձերբակալումները նորէն բազմացան:

„Արտասահմանէն արդէն Յ ամիսէն աւելի է, որ Հայոց փաթեթիկը սպառնագրեր կլստանայ—խորչեցաւ կառավարութիւնը, —Եթէ Տրաժարող էր՝ շատոնց Տրաժարած պիտի ըլլար. ուրեմն միայն արտասահմանը չէ. վերջերս ասկէ աւ վճռ ական ազգաբարութիւն մը եղած ըլլալու էն...“

Այս տրամաբանութեամբ է որ ոստիկանութիւնը մարդ չի թողներ՝ որ ծակը չխոթէ... .

ՕՐՄԱՆԵՐԱՆԻՆ աչքը լոյս:

•

Թիւրք շըջանները խիստ մտահոգ են. չարագուշակ լուր մը կը պտըաի. Պետերբուրգի և Լօնդօնի դահլիճներուն միջն բուռն բանակցութեան մը ձայնները կուգան հօս, ու ան ալ նեղուցներու՝ Դարդանէլի և Բօսֆօրի իննդրի մասին: Խօսք կը դառնայ թէ ուազմանաւերուն ազատ անցուդարձ՝ պիտի ժողվատրւի և պատերազմի ամեն ալ երկու պիտութիւններուն նաւատորմերուն բռննկը դիրքը որոշւի:

2

Անցեալ օր գիրմանական շոգենաւ մը քարափին մտացներու համար փոքրիկ նաւածիդ մը կ'օգնէր, շղթայէն ձգելով: Մեջբնագործին մէկ վճռական սխալին զնայ՝ նաւածիդին կաթսան պայթեցաւ փոքրիկ նաւը հակոյն ընկողմեցաւ և վոսյի հ բանտորներէն մէկ քանին պայթիւնէն սպաննեցան, միւսները ծովը խեղդուեցան:

Պայթիւնը զարհուրելի էր. Ղալաթիոյ նաւամատոյցն մինչև Ղալաթիոյ աշտարակը, մինչև Ստամբուլ, մինչև Խաչիւտար որոտը թնդաց: Թիւրք խանութպաններն ու խուժանը, որ ամէն գժբախտութեան մէջ հայու մատ կը տեսնան, 96-ի պանքարին ուումբերուն կրկնումը կարծեցին ու իսկոյն զէնքի գիմցին. մօտ 16 կէտերու վրայ զինւած մարդեր երեցան: Քայլ մը մասցեր էր որ արիւնայի տեսարանները կրկնւէին:

Էսկ Հայերը ոչխարի պէս կըսպասեն մասգործի դասակին. գէթ ատքմանակ մը դնէին, անձնապաշտպանութեան պարբի՛կ միջոց մը ձեռք առնէին. . .

3

Զերբակալումները եռապատկւած են նաև թիւրքերուն մէջ:

Թունալի Հիմն անուն Երիտասարդ-թիւքը վերցերս շրջակերպական մըն է հրատարակեր որ բազմաթիւ օրինակներով բաժնւեր է և հոս. Այդ կոչը կը յայտարարէ որ այս տարի իտալական նրինդիզի քաղաքին մէջ երիտասարդ-թիւքը բու համաժողով մը տեղի պիտի ունենայ: Պալատը մէծ մտատանջութիւն կը տիրէ այս առթիւ:

Միայն Խըլդըզի մէջէն 30 հոգի գ աւ ա գ ի ր ն ե ր
կամ էասկածեցիներ Ափրիկեան Թրիպոլիս աքսորւեցան
Մահուաբիկի Թէֆիկ շոգենաւով։ Այժմ ալ կ'իմանանք
թէ Խզմբըէն ալ նոյն նաւը լեցուցեր են ասկէ տու-
ջուց իրկւած 40 աքսորականներ և ս. . .

25 սեպտեմբեր

Աերջապէս „անձայն հրաժարեալնիս“ և յն ա-
ւար հրաժարեալ մը եղաւ:

Բաւական ատեն Օրմանեան տառանեցաւ, ի՞նչ ըներ, ո՞րմէ աւելի վախնար. սուլթանին քայիկութենէ՞ն, անոր Նըրուսաղէմ ազսորէ՞ն, թէ ժողովուրդի բարիութենէն ու անոր գեղակով անդիի աշխարհ աշխորէն: Երկունքը երկար տևեց և իկերջոյ ծնաւ հը ա ժ ա ր ա կ ա ն մը: Մերակումքերը 23-ին (Հ. տ.), հինգշաբթի օրը, Պատրիարքարանի առաջին գործակատարը, տէր Կերսեսեան, եւ ունտւորտած Օրմանեանի նձայնաւորը¹ ու գրաւոր հրաժարականով՝ դնաց պալատ, Թագսիմ պէտի քոյ, որ անէն ալ թուղթը հասցնեն Մարդասպանին ձեռքը: Թագսիմ կը մերժէ՝ Ալեհիապետը լսած է հրաժարականին լուրը և իշխատ սրդողած. անոր բացարձակ իղձն ու հրամանն է որ Օրմանեան շարունակէ իր պաշտօնը: Տէր Ներսէսեան իր ստացած հրաշանգին համաձայն, Պողոսիթը կը թողնէ հոն ու կը մենիի:

Սիւնոյն ատեն՝ Պատրիարքարանին երկրորդ գործակաւարը Հրաժարականին երկրորդ օրինակը կը տանի Արդարութեան պաշտօնաւունը։ Նոյն միջոցին եղլորդէն տար Հրաման կը հասնի Հոն, որ մէկը նորկեն Օրմանեանը Համոզելու։ Զիմէր պէյը նախարարին կողմէն կը փութայ Օրմանեանին տունը Պէրա։ Պատրիարքին անդըրդնելին կը մնայ ու կ'առարկէն, որ մինչև օրս իր ըրած

ամէն դիմումներու, իրեն եղած ամէն խոստումներու մէջ չարաշար խարւեցաւ. շատ բան խոստացան, բայց բան մը չկատարեցին: «Մինչև որ իմ՝ առաջարկած չորս պարագաներու չընդունին և իրապէս չգործադրին՝ ինձ համար այլ ևս անհնար է պաշտօնս շարունակել»: Խընդիրը գեռ այս վիճակին մէջն է:

Օրմանեանին չորս պահանջները շատ անգամ գրւած
են թերթերու մէջ, բայց անգամ մըն ալ գրելը աւել-
լորդ չէ անոնց ահաւոր ողորմելիութիւնը ցուցնելու
համար:

1) Հայերու ազատ երթևեկիութիւնն Թիւբքիոյ մէջ
(Հարկաւ „կանոնաւոր“ անցագլով). 2) Հին ու նոր
բանտարկեալներու արձակում (իմայ ոչ սոսկ գողե-
րու և ոճրագործներու). 3) Դէքքերու առթիւ կոր-
ծանւած վանքերու վերաշնում և կորուստներու հա-
տուցում (ո՞ւրեէ, ո՞վ...) և 4 Կիլիկիոյ կաթողիկոսի
ազատ ընտրութիւնը ըստ առաջնոյն՝ Ասոնք են Օրմա-
նեանին ե րեւելի պահանջները. . .

Վերջին պահուն Պօլէն Յօ սեպտեմբեր (Տ. տ.) հնապար
մը լուր կը քերէ թէ սուլթանը իրադէկով մը վաւերացուցեր
է՝ Օրմաննեանին պահանջները քննելու պաշտոն ունեցող Յանձ-
նառողովին հնտեւեալ առաջարկները.

1) Խավանել այս արտակարգ միջոցները, որնք սահմանած էին Տայերուն երթեւեկը արգիլելու գաւառներուն մէջ, վերապահելով կավածելի աներուն միայն:

2.—Պետութեան աշակցութեամբ վերաշխնել կամ նորոգել հայկական իսպանակութիւններու ատեն քանդակ դպրոցները, եկեղեցիներն ու վանքերը:

3. — Զարդեցու ատեն սպաննուած կառավարական հայ պաշտօնեանեցու առնելիքները վժարել:

4.—Պօսիր մօտ, նէւիլուլէ, որքանոյ մը շինեւ
5.—⁵⁴ Տայ բանտարկեալներ ազատ արձակել եւ 24 մա-
տան դատապարտւածներու ալ պատիժը ցմահ բանտարգելու-
թեան փոխնէւ

Օրմանամի շնորհի այս օրին հասանք որ անցագրով մատ-
րոքնեւ որբանոց շինուել էքնութիսներու ամսականը վասրել տաւ,
այսինք մը դանեւկան հատուցում ուզել դպրոցի մը կամ վասկի
մը համար ՝ բառնենորդում՝ զսել է.. Դեռ ան աւ համար
համարկու է եթէ իրադրութիւն:

1173

Եօթնրորդ նասակ

ՊԵՏԵՐԱԾՈՒՐԳ, 2 սԵպտեմբեր

1896 թւի մայիս ամիսն էր, որ Պետերբուրգի ու քաղաքական շրջաններում՝ եթէ միայն արդպիսի անուն կարելի է տալ մեր „Պռնիքակ շրջան“ Ներքից ունէ մեկին՝ լուր տարածւեց, թէ երկու պաշտօնական անձեր են գնում Կովկաս, քննելու „Հայկական տրամադրութիւն“՝, որ պէտք է աւելացնեմ՝ այն ժամանակ օրուայ ինդիք էր մայրաքաղաքում . . .

Ըուտով այդ լուրը ճշգւեց և պաշտօնական կերպա-
րանք ստացաւ: Գնացողներն էին՝ ներքին գործերի մի-
նիստրութեան կողմից՝ նոյն մինիստրութեան պաշտօնեայ
Առաջարկ, և անձնապիտք թագաւոր կայսրի կողմից՝ իշ-

խան հսպէր Աւկստոմսկին, որի մասին նախորդ նամակում արդէն մի քանի խօսք ասելու առիթ ունեցայ:

Դուք տեսնում եք, որ յանձնարարութիւնը վերին աստիճանի կարևոր էր, պլազէս կայսեր կողմից յատուկ անձ չեր ուղեղորդի կովկաս, որովհետեւ ոյատուկ անձ ուղարկելը վերապահւած է առանձին կարեւ ուր դէպքերի համար, այն էլ արնակիս դէպքերի, որոնք սովորաբար մնում են իրեւ պետական գաղտնիք և երթեք հրապարական խօսակցութեան նիւթ չեն կազմում: — Արդ, ո՞րն էր այդ կարևոր դէպքը:

Պատմեմ:

Հարցոց հարցը մի կողմից և հայոց դպրոցների փակումը միւս կողմից — ահա առիթը, որ «Հայկական տրամադրութիւնները» մայրացաղաքում ջերմ վէճների նիւթ դարձան: Նոյնիսկ պալատական շրջաններում գտնւեցին սանվեհեր՝ մարդիկ, որոնք անպայման դատապարտում էին ներքին գործերի մինիստրութեան կարգադրութիւնը՝ փակելու հայ դպրոցները, մանաւանդ որ փակուղ դպրոցների տեղ նոր դպրոցներ ոչ բացւում էին և ոչ էլ բացելու յուսեր կայիր: Ներքին գործերի մինիստր Գօրեմիկին, որ, իդէպ ասած, իր պաշտնավարութեանը գլխաւոր փեշակը դարձել է մարդիկ աքսորել լրագրեր փակել և ամեն ձեռնարկ արգելել ստիպւած էր ամեն տեսակ հրէշային սվտանգներ՝ հնարել՝ իր կարգադրութիւնները արդարացի ցցյ տալու համար: Ահա այդ սպատակով էր, որ դպրոցների փակման իրեւ գլխաւոր պատճառը հրապարակ բերւեց այն մեղադրանքը, թէ ն ա ի այդ դպրոցներում սակականավարչական՝ պրօպագանդա՝ լինում, և երկը ո ը դ՝ այդ պրօպագանդան մեծ կապ ունի այն ընդհանուր համակրութեան հետ, որ ո վկա ասի հայերը սկսել են ցոյց տալ դէպի Անդլիան և անգլիական քաղաքականութիւնը...

Անդլիա և անդլիական քաղաքականութիւն, — օ՛հ, այդ երեք բառը արդէն հերիք էր, որպէսզի Պետերբուրգի մէջ ահագին շառածքանար, որովհետեւ երեկի լսել էր — ամէնախելացի ուստ մարդն էլ իր տրամադրանութիւնը կորցնում է, հենց որ խօսք է բացւում անգլիական քաղաքականութիւնը և անգլիական քաղաքականութիւնը մասին: Գուցե, հին Ռուսաստանը այնքան չէր վախենում մօնութիւնը ունի անդլիացու մասին: — Նրա կարծիքը անդլիացին այնքան խորամանկից ուստ դիւանագութիւնը որպան ժամանակակից ուստ դիւանագութիւնը անդլիական քաղաքականութիւնից: Միջակ խելքի տէր ուստ չին օվնի կը զարմանալի հասկացողութիւնը ունի անդլիացու մասին: — Նրա կարծիքը անդլիացին այնքան խորամանկի համար հանդիպութիւնը է, որ նրա հետ մրցում սկսել՝ կը նշանակի անհուսափելի պարտութեան ենթարկելու... Ահա թէ ինչու անդլիական՝ անւան յանկարծական կապը կովկասի հայերի հետ, — և այն էլ այն ժամանակ, երբ թիւրքահայերի քաղաքական գոյութիւններան ինդիրը օրւայ առաջնակարգ ինդիր էր քաղաքական աշխարհում, — դող պատճառեց ուստաց պօլիտիկոսներին, որոնք սկսեցին աւելի կատաղի կերպով կրնուել իրենց ատամները հայերի դէմ: .. Տարաբախարար այս սփափուկ բոպէին չափն չդունեց և ոչ մի հատ խորաթափանց անձ, որ տեսնէր, թէ այդ նոր քաղաքական բագն էլ նոյն քուրայի մէջ է ստեղծագործ և ած, որտեղ արդէն քաղաքոց թիւում էին ամեն տեսակ հրէշային՝ մեղագալուց թիւում էին ամեն տեսակ հրէշային՝ մեղագալուցներ հայերի դէմ: ..

Անդլիա ուստական միջման փաստը դուք լաւ գիտէք: Դա պատմական իրողութիւն է: Այն օրից, երբ ուստաց և անդլիական շահերը ընդհարւեցին Պօլսում, այն օրից, երբ Մեծ-Բյուտանիան ձեւք բերելով հնդկաստանը, քաղաքական դաւանական շահանքի հարձեց դարձեց՝ կարել ուստաների ձանաքաղաքական դաւանական շահանքի հարձական դարձեց՝ կարել ուստաների պարզ գէպի հարաւ, — այն օրից արդէն այդ երկու պետութիւնները դարձան անհաշտ: Բայց ի՞նչ մաս ունեն այդ հարցում կովկասեան հայերը, — իրաւամբ կը հարցնէք դուք:

Խսկոն կ'իմանաք:

Դուք լաւ գիտէք, որ 1878 թւին, ոսւս-թիւրքական պատերազմի ժամանակի, Անդլիան վճռական պաշտպանութիւնը ցոյց տեց Թիւրքիային, և այդ պաշտպանութիւնը արտայաւեց ոչ միայն նրանով, որ Անդլիան մատակարարեց Թիւրքիային փող զէնք և զինուրացիան հրահանդիչներ, այլև նրանով, որ զինադադարից յետոյ, Բերլինի վեհաժողովի միջոցով, Բիկոնսֆիլդի կառավարութիւնը յետ մղեց ուստաներին կարինից, որը նրանք արդէն գրաւել էին իրենց զօրքերի արիւնով, որպէսզի որքան կարելի է ուստաց տիրապետութիւնը հետու մնայ այն գծից, որ տանում է դէպի Պարսից ծոցը — անդլիացիների համար այդ կարեւոր կէտը: Անայց դրանով — ասում են ոսւս գիւանագէտները, — անդլիացիք շանգաստացան: Նրանց իդէալն է մի անանցանլի պատնէշը դնել ուստաների արշաւանքի առաջ, և այդ պատնէշի գլխաւոր ամրութիւնները պիտի լինեն: Կ. Պօլս, Սև ծովը, Կովկասեան լեռնաշղթան, Պարսկաստանը, Աւղանիստանը, Զինաստանը մինչև ուստատեաց ձապօնիան: Այդ պատնէշով Անդլիան կարող էր լինի ընդմիշտ փակել ուստաների ձանապարհը և ընդմիշտ պատահովել իր գերիշնանութիւնը հնդկական ովկիանոսի վրայ և իր հարաւային կալանքներում:

Ահա այսպէս են պատկերացնում ուստ դիւանագէտները անդլիական քաղաքական պատնէշը, որի ամրութեան համար, նրանց կարծիքով, Թիւրքանիան չի խնայում ոչ փող և ոչ էլ քաղաքական ին տրի գն եր: Եւ ահա այդ ին տրի գն եր են, որոնք սկսել են գործել Կովկասում, գլխաւորապէս կովկասեան հայերի ցջանում: Ալերջին տարիները, շարունակում են պընդել անդլիատեաց և ուստ քաղաքագէտները, — Անդլիան ձևափոխեց իր քաղաքականութիւնը Փոքր-Ասիայում, որտեղ նա ուզում է մի նոր, տեղական պատնէշ կազմել ուստաների դէմ՝ նոյնակ հայերից, ստեղծելով հայկական այդ պատնէշը աւելի զօրել լինի, անդլիացիները ուզում են պատսամբեցնել Կովկասը, որպէսզի այնանդից յետ քշել տան ուստաներին, և այդպիսով ուստաց տիրապետութեան բնական սահմանը դարձնեն Կովկասեան լեռնաշղթան — այդ բնականապէս ամուր և վստահելի գիծը:

Տարակոյս չունեմ, որ իմ ընթերցովներից շատերը կը ժպատն այդ սքաղաքական անեկտօտիկ վրայ, բայց կարող էք երեւակայել որ այդ սահմեցուը՝ շատ լուրջ բան է համարում այժմեան ուստ դիւանագէտների շըրջանում: Ուստ թիւրքական պատերազմի ժամանակ գալու անդլիական շահանքի այս ուստաներին պաշտօնական ձեւ ստացաւ: Պատմաւմ են, երբ Ալաշկերտում թիւրքը զօրքը մի-երկու յաշողութիւն ունեցաւ, և լուրեր էին պարտում, թէ օսմանեան զօրագում կարող է անցնել իգդիրը և մտնել Երևանեանեան:

Նահանգը — Թիֆլիսում, զինւորական բարձր ատեանում, պաշտօնապէս քննուում էր այն ծրագիրը, թէ ինչ պէս և որտեղ պաշտպանեն Կովկասի միւս կետերը։ Այդ ծրագրի քննուութեան ժամանակ լուրջ կերպով սեղանի վրայ էր գրւած այն հարցը, թէ անգիտական դրդմակը Կովկասում ապստամբ քական ցոյցեր կարող են լինել, և ուրեմն կառավարութիւնը մի անգամից ստիպւած կը լինի կուել երկու թշնամու դէմ — թիւրք զօրքի և տեղական ազգաբնակութեան դէմ։

Եւ այդ այն ժամանակի, երբ ամբողջ Կովկասի քրիստոնեաց ազգաբնակութիւնը՝ մանաւանդ հայեր և վրացիք, ոչ միայն կուռում էին ռուսաց զօրքերի շարքում, այլև ցնծութեան աննկարագրելի ցոյցերով էին ընդունում՝ ռուսաց զէնքի ամէն մի յաջողութիւնը. այդ այն ժամանակի երբ հայ զօրապետները — Կազարեվ Լորիս-Մելիքօվ, Տէր-Ղուկասօվ, Շեիկօվսիկօվ — Ալաշ-Կերտի, Կարսի, Կարինի կողմերում շլացուցիչ փայլ էին տալիս ռուսաց զօրքին, և նոյնիսկ թիւքքահպատակ հայերը թափօրով էին ընդառաջ դուրս գալիս ռուսաց զօրքին: Որպիսի՞ աններելի մոլորութիւն: Դեռ լաւ է, որ այդ մոլորութիւնը շուտով պարզեց, և կառավարութիւնը, գոնէ պատերազմի ժամանակի, համոզվեց, որ իր կասկածները անհիմն են և անտեղի. . .

Այդ սկասկածներից՝ պատճառով, ամեն մի անգլիացի, որ գնում է Կովկաս, կամ իրեւ Ճանապարհորդ, կամ իբրև Թղթակից, նոյնիսկ իբրև առևտրական, միշտ գառնում է ոստիկանական հսկողութեան ենթակայ: 90-ական թւականներին մի քանի անգամ Կովկաս գնաց Լօնդոնի *Daily News* լրագրի յայտնի Թղթակից Ֆիջջերալը, որ յատուկ համարանք էր տածում դէպի Թիւրքահայոց խնդիրը, և, ինչպէս յայտնի է, գաղտնի կերպով սպանւեց Թիւրքիայում, իհարկէ, Թիւրք գործակալների ձեռքով: Ըստրհիւ իր յանձնարարականների, Ֆիջջերալը սիրով ընդունւում էր կառավարչազետի կողմից, ստանում նրանից որպաց թերթ՝ անարգել Ճանապարհորդելու համար Կովկասի բոլոր կողմերում, բայց դրա հետ միասին ոգալունի հրահանգները՝ էր տրուում ոստիկանութեան խստիւ հսկելու, թէ ուր է գնում նա, ում հետ է տեսնեում, ինչ է խօսում, ինչ է անում... .

1895-ին Կովկասի վրայով Կարին անցաւ մի այլ
անգլիացի, յայտնի թղթակից-հրապարակախօս Էմիլ Դիլօն,
որի նամակները հայկական կոտորածների մասին ահա-
դին աղմուկ բարձրացրին ամբողջ Եվրոպայում։ Դիլօն
նոյնպէս ներկայացաւ կովկասեան կառավարչապետին,
սիրով ընդունեց նրանից, նոյնպէս ստացաւ ուրաց-
թերթ՝ անարգել ճանապարհորդելու համար, մինչև
իսկ Կարին հասնելով՝ ամէնաջերմ աջակցութիւն
գտաւ այնտեղի ուսւաց հիւպատոս Մաքսիմօվի կող-
մից, — բայց չնայած դրան, դարձեալ ոստիկանութեան
հրահանգ էր տրւած խստի հսկել նրա ամէն մի քայլը։
Եւ մի տարի յետոյ, երբ Դիլօն արդէն Անգլիայուն
էր, կովկասեան ժանդարմական վարչութիւնը ահազ ին
գործ՝ էր սկսել թէ Թիֆլիզի հյաերից ով է տես-
ւել այդ անգլիացի թղթակցի հետ, ով է նրա հետ
ճաշել ինչ են խօսել ում հետ գրագրութիւն ունի
եալյն եալյն . . .

Հեմ կարող այս առիթով չի հշել Պետերբուրգի մի

լեհ ծանօթիս սրամիտ հանաքը: Արանից երկու տարի
առաջ, երբ ջերմ խօսակցութեան նիւթ էր անգլիացի
կապիտալիստների Քագու գալը՝ այնտեղ նաւթային
ձեռնարկներ սկսելու համար, և երբ մինիստրութիւնը
զանազան խիստ ձեւակերպութիւններ էր դնում՝ անգլիացի
կապիտալիստների մուտքը թոյլատրելու համար, իմ լեհ
բարեկամը ասել էր մի ոռւս պաշտօնեայի.

— Ես կարծում եմ, մինհստրութիւնը թոյլ չի տայ
անգլիացիների Կովկաս գալը, որովհետև ն ա ւ թայ յին
հարցի տակ խորամանկ անգլիացիք կարող են թագ-
ցրած լինել քաղաք ան նպատակ են բայօմ
գիտէք, թէ ինչ ինտրիգներ են լարում Կովկասում. . .

— Այո՛, այո՛, պատասխանել էր ոռւս պաշտօնեան,
եթէ ինձանից կախւած լինէր, ես մի հատ անգլիացի
էլ չէի թողնի Ռուսաստանի սահմաններում:

— Բայց և այնպէս, — զրայ եր բերել հանաքչի լեհը, — անդլիացիք կը գտն Բագու, որովհետև նրանք շատ հարուստ են և նախ քան Բագու գնալը՝ դալու են Պետերբուրգ իրենց լեթ քսանիներով ։ ազգեցիկ մարդկանց ։ տեսնելու համար . . .

— Այդ էլ ճիշդ է, — վրայ էր բերել ոռու պաշտօնեան, ժպտալով, — փողը ինչ ասես չի անիլ. :

Ա երջապէս Կովկաս Ճանապարհ ընկան Մասալօվ և
Ուխտօմսկիու Նրանց յանձնարարւած էր իմանալ երկու
բան. 1) Ճիշդ է, որ Հայոց գլուխներում Հակառու-
սական պրօպագանդա էր լինում, և 2) Ճիշդ է, որ
Կովկասի Հայերը տածում են զերմ Համակրութիւն
դէպի անդիմացիները և անդիմական քաղաքականու-
թիւնը: Այդ յանձնարարութիւնը իրենց ուղեցոյց
դարձրած՝ Մասալօվ և Ուխտօմսկին հասան Թիֆլիզ
գնացին Երևան, մտան Եջմիածին, մի քանի օր Հիւըք
եղան Հայոց կաթողիկոսին, նորից դարձան Թիֆլիզ, տես-
նեցին Հայերի հետ, շատ բան լսեցին, շատ բան դի-
տեցին և վերադարձան Պետերբուրգ շատ որոշ պա-
տասխանով:

Այդ պատասխանի մէջ որ զեկուցման ձևով ներկայացրին ներքին գործերի մինչևտրին, իշխան Ռուսական առաջնորդութիւնը և Մասալօվ վճռական կերպով հերքում էին կովկասեան հայերի դէմ բարձած մեղադրանքները:

— Ըատ ցաւում եմ, — ասել է մինխստք Գօրեմիկին, ընդունելով այդ զեկուցագիրը, — որ չեմ կարող ընթացք տալ դրան, որովհետեւ մինխստութիւնը արդէն մի զեկուցում է ներկայացրել նորին մեծութեան, բոլորովին հակառակ բովանդակութեամբ: Մինխստութիւնը չի կարող փոխել իր կարծիքը. մնում է, որ

Դուք զորակը առը զեկուցման բովանդակութիւնը. . .
... Բանից գուրս է գալիս, որ դեռ այս ժամանակ,
երբ Մասալով և Ռեխտօմսկի փաստեր էին հաւաքում,
Գորեմիկին և Պօրեղծօնոսցել կարողացան նորից յաղթ
ող ող հանդիսանալ պալատական այն փոքրիկ կուսակ-
ցութեան գեմ, որ կարողացել էր համողել թագաւոր
կայսրին քննիչներ ուղարկել Կովկաս հարցը ուսումնա-
սիրելու համար, և իբրև հետևանք այդ յաղթութեան՝
նրանք անմիջապէս առաջ մղեցին հակա հակա ան-
զեկուցումը և պաշտօնական ընթացք տւիցին նրան:
Դրանից յետոյ էր, որ սկսեցին մի շաբաթ նորանոր խըս-
տութիւններ Կովկասի հայերի գէմ. . .

Դուք տեսնում էք ուրեմն, որ շատ անգամ պետա-

կան առաջնակարգ մի զեկուցում գրելու համար, եթէ մինչև իսկ այդ զեկուցումից կախված լինի մի ամբողջ ազգի հանդսութիւնը, իսկի կարիք չկայ բարեխազօրէն փաստերը ուսումնասիրելու և ճշմարտութեան գրօշակի տակ մանալու Փաստերի տեղ կարելի է գնել ուստար ինտիգներ" և ճշմարտութեան տեղ՝ ոպետութեան ապահովութիւն" բառերը, և գրել ինչ որ կամենաք, ինչ որ կարող է տեղաւորւել ուեւ մեծ մինհստրի փոքրիկ գլխում: ..

Ի դեպ: Երբ 1896 թւին Էջմիածնի հայոց կաթողիկոսի անունից մի հայ տեմնել էր ներքին գործերի մինհստրի հետ՝ ինդրելու դպրոցներու վերաբացման համար, մինհստրը, իմֆջի այլոց ասել էր. ոհայոց դպրոցների փակումը մի պատիժ է կովկասի հայերին այն համակրութեան համար, որ նրանք ցոյց են տալիս Անդլիային":

Ահա սցր տեսակ ողեկուցագրերի" արդիւնքն է, որ այսօր ուսուց մամուլի ամենազարելի ներկայացուցիչ ները, պետական շահերի պաշտպանների դիմակի տակ ծածկող այդ արարածները, որոնք վարժւել են իրենց ականջները միշտ իւշտրած պահել մինհստրական կարինէների դռան ճեղքերի մօտ, աշ ու ձախ, տեղի ու անտեղի, մի բան են կրկնում, մի բան են քարոզում. ոհայերը հականառավարչական ճգումները ունեն, հայերը անդլիական ինտրիգների գործիք են": Այսպէս դատող ուսու գրողների և լրագրերի կարծիքով եթէ կովկասի հայերը փող են տալիս իրենց սովաստնջ թիւքահայ եղայրներին կամ բողոքում են նրանց ճնշումների գեմ, այդ անում են ոչ թէ մարդասիրութիւնից և եղբայրներութիւնից դրուած, այլ իրքեւ կոյր գործիքներ ոանդլիական ինտրիգների", և կամ եթէ եւրոպա ապաստանած հայերը բողոք են բարձրացնում յօգուտ իրենց սարուկ եղայրների, այդ հետեւնք ոչ թէ մարդկարին տարրական պարտականութեան, այլ դարձեալ ոանդլիական ինտրիգների":

Սատանաներ և գեեր տեսնել այստեղ, ուր ոանմեղ հրեշտակներ" են նստած, — դա ժամանակակից ուսու ողեկուցագրողների" և ազդասէր-գրողների. Նշանաբանն է, երբ գործ ունեն ուեւ փոքրիկ ազդութեան կամ ուեւ քաղաքական ինդրի հետ: Դա, եթէ կամնում էր, մի հիւանդու գրութիւն է, մի քաղաքական մզաւանջ, որ խեղդում է այդ պարոններին, որոնք նոյնիսկ հայկական կոտորածներից յետոյ մի գլուխ գոռում են, թէ հայերը ուզում են վերականգնել Մեծ-Հայաստանը մինչև Թօնի վրա:

Եւ գիտէ՞ ինչու համար է ստեղծւած, ոմինչև Թօնի/վրայ" Խօսքը: Նրա համար, որ ցոյց տան, թէ հայերի երազած Մեծ-Հայաստան ստեղծելը կապ ունի անդլիական այն քաղաքականութեան հետ, որ հակառուսական պատնէշը ուզում է հիմնել կովկասեան լեռների վրայ. . .

Էրնէկ իմանայի, ո՞րն է աւելի հեշտ — հայերին տեսնել Մեծ-Հայաստան, թէ ուսուներին՝ ազատւել մեծ-յիմարներից. . .

Է ԱԿԱՆՈՒՆԻ

ՄԱՄԱՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* *

Տեմբ իր 18 սեպտեմբերի խմբագրականը ներած է պատրիարքական տագնապին: Հատւած մը.

"Կարելի է մոպծել թէ կեղծումներու վերսկումը որոնց զո՞ն չայսատանի զժամանակ թերես անուղղակի եւ լեւեան կերպով իր մասն ունեցած ըլայ այն շարժափներու թիւն մէջ, որոնք այդ ընթացքն (Ծագաման) պատճան եղան: Ամէնէն յուգի լուրերը կը պատճին այդ բաժանանշ ընակութիւններու կացութեան մասին: Իրենց անպատճի մասին նրախուածած թիւրդերը վերստին սկսած են իրենց աւարտական մասաց այսերուն վրայ: Նորէն շարդեր տեղի ունեցեր են, թէեւ առայժմ ցանցաւ: Այսան տանշաւ եղի մը զեկորներու պաշտպաններու փոխանակ, օսմաննեան իշխանութիւնները, յատկավէն Ալտնայի, Ֆիզրաննելիստի և Բայազի առաջնայի առաջնութեան մէջ ու Բայազի սահանգներուն մէջ, որերը տարաքերէ եւ ապաստարամները ու Բայազի ունչացնելէ ետք, բացաձակ ծնուպանութեան մը մէջ կը մկրտանան եղեր, որեւ մերթ զուլս կելին միան նոր անարդի պատճիւն մը գործելու համար իրենց վարդութեան տակ գտնուող ներուն դէս: Այս բանները պէտք է սր գիտին, ո՛չ միան որպէսի ներապան չափէ իր պատախանատութիւնը, թոյլ տալէ առաջ որ նորոգիւն — թէէ այդ խայտառակութիւնը տեղի ունենայ չայսատանի առաջին կոտորածներուն արժաւրժները, այլ որ պէսզի հանրային կարծիքը զգուշանայ գրաւելէ-նիւթական շահերու մուանգութեամբ և քիչ կամ շատ սպասարար լաշ-սպարերու բանակութեամբ:

* *

Autorité իր 27 սեպտեմբեր համարին մէջ, "Դուռը և հայերը" խորագրին տակ, նկարագրելով այն բոլոր կեղեքումները որ թիւրը իշխանութիւնները կուտան ճակորդու հայերուն; Հետեւեալ տողերով կը վերջացնե.

"Այդ ևսոյ վտանգաւոր է, որովհետեւ արտասահմանի բազմաթիւ հայ զաղութեամբ մոտանու կզգաբանին թիւրը նոր զբունութիւններու մեջաւտութիւնը հայցերը: Արդ պէտք չէ համեցնել այդ պետութիւններու նախկին անշարժութիւնը թէ մշտական այդ պատկեն իր մօտ: Անոնցմէ մէկ զամնին թիւրեւս պատրակ մը կը փնտոն իշազործելու համար ինչ իշազ գրեր, եւ Արդիւ չամինի տարտիքը ներքին վունդի մը առջեւն առնելու տեղ, կընայ զուրսը շատ աւելի իրական վտանգ մը ստեղծէ":

* *

Պր. Օգիւստ Բէնառ Սովորութեան մէջ հրատարակած իր մէկ յօդւածը այս խօսքերով կը փակէ:

"Ուրախութեամբ իմացանը որ այն սուրբ կոիւս որ մենք տարիէ իվեր կը մէկնէվ չայսատանի դաշինքն ունիմ" սուրբ կութանին սեւ նողուն մէջ վոդով ձագած է, մնայ կը յուսանք մը վատ տեսն է ատ, մեր ինորին համոզումը — որ շատ շամաց յաղթանակը պատիշնուք:

* *

Reynie Blanche-ի վերջին համարին մէջ պր. Պոլ Լուի, մատնանիշ ընելով մօտալուս կոտորածներու մասին եւ բարակած շշուկները, հրաւեր կը կարդայ բոլոր աննենգ հոգիներուն, մարդկութեան ախոյշեաններուն — ինչ աւ ըլլայ իրենց քաղաքական դաւանանքը — որ փութան երևան հանեն ու նշաւակեն յդութեան մէջ գտնուող այդ անցքերը, քանի ատեն կայ: Յօդւածագիրը կը յիշատակէ թէ ինչպէս հանօթօ ու Լօրանով 1895-ի կատորածներու ատեն լրութեան դաւադրութիւնը կազմեցին քող մը քաշելու համար ահաւոր իրականութեան և ժողովրդութիւնը խիշճին միջն, և կը շարունակէ.

"Պատշաճ էր արթնցնել այս կեր ներկայ անցեալը, այն

պահուն, իսր Ապէկլ չամեդ, իր Թօսաւից աջողանցներէն գիտուցած, Թերեւս ծննդի տակէ քաջաներած կեդրոնական կամ արեւելեան Երօպայի պետութիւններէ՝ կը ոճնի Նորէն իր մասները Թաթիւնել անհաւատներուն արինքը: Այս անզամ պէտք է որ բոլոր անկախ միտքեռն միաբանին ծշմարտութիւնը իմանալու, եւ զիտնալէն ետք, Դրավարակներու համար: Այս կամ այս ազգի երկրանկարական լիբումները նոս բնաւ մտագեաղ ընդէր մեց եւ լսուք քաղաքական իննդի մը մասին ալ չէ: Բայց մենք կը սննդը որ թթէ այսօք Կոմը վայր, Սոտարօի Ծնչման տակէ, եւ գիւտասանսներու մաղակցութեան շնորհի, Քերկերը իրենց բնագններուն ասպարէց տախին, մենք հանգիս չպիտի ուննամաք մինչեւ ընդգլուխը չներփէնին է հանրային գարշամբը Եթելագրինք Արևմուտիքի մեր ընկերութիւններու մէջ տակաւին առնական եւ ասող մնազամ մասին:

10

Սոտալուտ ջարդերու լուրը նկատելի յուզում առաջ բերաւ Եւրօպական մամուլին՝ մեջ։ Խաղի նոր խայթ մը ցնցեց ամէնքը՝ այն ահաւոր պաասխանատութեան առջև, որ ունի Եւրօպան այդ աղէտներուն կրիկումին հանդէպ, նախորդ ոճիրները հանդուրժած և անոնց դէմ բողոքած չուլայուն։

Պր. Աւրորէն Գօհիէ, *Aurore-ի* 27/9 սեպտեմբեր
Համարին մէջ սկայաստանի Համար՝ խորագրին տակ
կորովի խմբագրական մը ունի, որ ամբաստանագրի
մը տպաւորութիւնը կը թողըր. Տեղի սղութիւնը կը
հարկադրէ մեզ բերել վերջին հատւածը միան.

„Պէտք է որ բովանձակ Ծրօպան ճանչնայ իր պարտականութիւնը և կատարէ վրչապէց։ Որովհետեւ ամրող Ծրօպան մեղապարտ է՝ չայսառնի թշառութիւններուն համար. խաղաղական համաժողովներու եւ մարդասիրական յայտարարութուուր ծագութ ծանրութիւններուն հակառակ, Ծրօպանն է որ համբաշխաբար կըստանմէ անլուր ոիթիք մը պատասխանատութիւնը,

Սուլթան Արդիկը չամրդ ստվակիթիւնար մարդասպան մըն է. պիտինք: Փոքր Սարոց մէջ ամէն բան տեղի ունեցաւ իր պացորոց հրամանով և ծզգրիս հրամանզերով. Տամաճայն ենք: Բայց բանի մը չի ծափայեր շարունակ ատ կրնելը, իթէ պատժական վօնի մը պիտի չյանզիքն: Ենք մմոց մթը պապանց տեղէն. Նախատինիններ կը տեղանք վայրի զազանին, աւելի են կը զարացնենք իր ռանկերուն մէջ բռնած զոներուն ոչէմ: ՄԵԿ ունաբ մը միայն փրկել կը լինայ ճայերու մասցորդը. պետութիւններու համաճայնութիւնը եւ անյապաղ մէջաւութիւնը...

Մեծ Մարդասապանը Արդիւ Համբու չէ, ծվառան է Մեծ Մարդասապան...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՎԱԴՐՈՒՅԹԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՎԱԴՐՈՒՅԹԻ

„Դրօշակ“-ի № 5-ի „Ազդարարութեան“ մէջ ակ-
նարկած անձը չկատարեց մեր պահանջը. ուստի ազատ
կըզգանք մեզի Հրապարակաւ յայտարարելու թէ այդ
պարոնը կը կոչէի ՄԻԶՐԱՆ ՊԵՈՐԻՔՃԵԱՆ, Թարգ-
ման Սալնիկի ռուսական ընդհանուր հիւպատոսա-
րանին:

Այդ խաչագողը իւրացուցած է 500 ֆրանքի գումար մը, որ մեր ընկերներէն մէկը երկու տարի առաջ յանձնած էր իրեն՝ մեր ձեռքը հասցնելու համար։ Յատկապէս կըզգուշացնենք Սալօնիկի հայ հասարակութիւնը այդ պարոնին շահատակութիւններուն դէմ, որովհետեւ, ինչպէս կը լսենք, դեռ վերջերս իսկ „սովետականներու“ անունով դրամ կը հանգանակէ եղեր Սալօնիկի մէջ . . .

Այս նշաւակումը՝ առաջին պատիժ իրեն:

Thrushes

სურათების მთავარი ტემა

Գոյէն 40 Փրամս, Խ. 9. 20, դ. Միւ. 5. — Բօթուշանէ՞ն Զ.
8. 20 Փը. — Դրառլիւնգնէ՞ն Արէժ 5 Փը. — Ձէյթուն 3 շելն:

ԱՐԵՒՏՎԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Ապառաժ 500 սուբլի, Սյանստան 400, Հրիփսիակերտ 100,
„Դաշտաձն“ Խ. 70, „Թօփիալ-տէրտէր“ Խ. 8, „Սուլք“-ի Խ. 5:
Գումար 1083 սուբլի:

ԱՐԵՎԻ Կօմիտէն՝

Ժերունով ծիռամբ 600 դաշնկան, չաշտարաք ծեռամբ 150,
Վեռուղի ծեռամբ 103, Անանոնի ծեռամբ 52, ծամբորդ 24,
Տ. Արշալույս 19: Գյումար 948 դաշնկան:

ՏԱՊՈՒՅ ԿԵՐՈ. ԿՕՄԻՏԵՆ՝

Նաբեկացի (Ճայիս, յունիս, յուլիս) 120 դաշնեկան, չքաշ (մայիս, տարիս, տուլիս) 120, պեղծակի 5: Գովար 245 դաշնեկան:

ЛШЬГИРЬ ЧОМЧЕЙ

Ասպարան 10. 50, Մրգառա 6. 25.—2. քաղաքը Ազգաւոր պահան
ժ. 9., Փ. Ա. 20-ական, Պ. Պ., Տ. լ. 10-ական, Պ. Ա., Ա. Կ.
5-ական: — ԱՐԵՎԱԿԱՆԻ ԱՆԴԻ Անժամանի Խ. 75, Երկիրած 35, Փի-
լիպպոս 20, մայիս ամստուն մէջ Անժամանի Խ. 28. 60, Երկիր-
ած Խ. 16, Ազգաւոր Խ. 10,— Փայլակ 5. 25, Կածառ 7. 25,
Արին Խ. 12. 50, Որոտում” Խ. 20: Գումար 383 դահնեկան ողջ:
ՀՈՒՐ-ԵՐՎԱԿԱ-ի Բարիկօն կոմիտէն, (մայիսէն—յունիս 15) Վահէ
59. 50, եւս 187, 75, եւս 56, եւս 28, եւս 30. 50, Մահ-Արձրունի 84,
Մոշեղ Յ եւս 78. 50, Գամ 61, եւս 17. 50, Խաթիլ 49, եւս 45. 75,
եւս 38. 50, Ժիրայր 124. 75, եւս 24. 50, Ազգան 90, եւս 9. 50, եւս
63. 50, ՄԴէ 81. 75, եւս 24. 50, եւս 33, Սուր 28, եւս 43. 75,
Դժւար Զամուռու 112. 50, Մոլենալ 76, Զամէ 22, Անդրամ 179. 375, Փէն 41, Կարափ զոլ 99: Գումար 1730 դահնեկան 12. 5
Զարիւրորդ (փուտ զրած):

Վեց-ճարմագիւն 200 դահեկան, 9-իրեզման. խումբ 5, 25,
Ա. քաղաքի Արամայիսի խմբէն (ամսավճարներ)՝ Արտն, Արութեակ,
ծիրակն 10-ական, Սեմ, 8կ. 5-ական, Նոյն քաղաքի Մնջե-
տոնեան խմբէն 25, Առը, Նայշ եւ Կայր ճ-ական դահեկան:
Գումար 285 դահեկան 25 (ողջ դրամ):

ԴԱՎԻԴ ԳՈՅՉԻՆ

Ծառակեղը լv. 50 սուբլի, նիկոլ (յունիս եւ յուլիս) 2: ԶՈՒ-
ՓՈՐ-ից 47. 85, նոյն տեղից նէք մի արծաթ ժամացոյց եւ
երեք կտաք լաթ, - ՍԵՒ-ՀՈՒՐ-ից ծրագչ 9. 50: - ԱՊԱՍՏԱՄ-ի Ծաւար-
շան պիտից Պ. Թ. 20. ոռութի, չ. 8., Յ. Կ. 16-ական, Կ. Զ.,
Գ. Ա. 10-ական, Վ. Ուստա, Մ. Բ. 8-ական, Յ. Ա. 7, Յ. Ա. 5,
Գ. Բ., Յ. Ա. 3-ական, Կ. Ե., Յ. Թ., Պ. Գ. 2-ական: - Ա-
կողոք զիւղից Յ. Բ. 5: - Արտաշատ պիտից Կ. Ա. 15, Յ. Բ. 12,
Կ. Գ. 8, Մ. Կ. 7, Գ. Բ. 6, Ա. Մ. 2: Լեզի ջուր զիւղից
Գ. Մ. 10, Ա. Կ., Մ. Կ., Յ. Գ.; Յ. Տ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ.
Մ. 4; Ա. Ն., Գ. Ա., Մ. Ա., Յ. Ա., Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ.
Մ. Մ., Յ. Մ., Յ.
Բագրատունեաց լv. (6 ամսավճար) 20 տուբլի, Արշակունիաց
լv. (6 ամսավճար) 29. 50, Մասհեննեան լv. (6 ամսավճար)
17. 50, Նէրներ Յ. Յ.

ԱՌԱՐԴԱՆՑԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆ՝

ՈՒԽՄԹ-ՀՅԹՈԲԸՆԴԻ՞ն՝ անդամավճարներ բ դօլար 50 սէնթ, — „Դրօշակի-ի համակիցներ՝ Սար երկաթ 2 զօլար, Ա. Վ. Պատմածեան եղբայշներ, Յ. Պոյածեան, Բ. Տ. Turnamian, մէկ-մէկ դօլար, Ե. Ա., Կ. Խ. Խ. Խ. եղբայշներ, Տիգրան Մուրատեան, Ուսի, Կ. Սար սիրան, Զարմայր, Գ. Cardashian, 50-ական սէնթ, Յ. Զարնշանեան, Բ. Տաթի, Յ. ԳաՓաֆեան, Կ. Վատայա, Կ. Սար պածեան, Մանափ 25-ական սէնթ: Գումար 15 դօլար 50 սէնթ: